

## Տ Ե Ղ Ե Կ Ա Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2007 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՅՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ


#### ՀՀ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ 2007 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿՈՒՄ

##### Իրական հատված

2007 թվականի հունվար-մարտ ամիսներին համախառն ներքին արդյունքը (ՀՆԱ) կազմել է 311.8 մլրդ դրամ, ընդ որում ՀՆԱ-ի իրական աճը կազմել է 11.1%, իսկ դեֆլյատորը՝ 3.9%: Իրական աճի ցուցանիշը բարձր է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշից 3.1 տոկոսային կետով, իսկ դեֆլյատորը՝ 4.9 տոկոսային կետով:

Արձանագրված աճին տնտեսության առանձին ճյուղերի նպաստման չափը բերված է ստորև.

**Առաջին եռամսյակում ՀՆԱ-ի աճին տնտեսության ճյուղերի նպաստման չափը, տոկոսային կետ**




Արդյունաբերական արտադրանքի ընդհանուր ծավալը 2007 թվականի հունվար-մարտին նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ աճել է 4.3%-ով: Ընդ որում, աճ է արձանագրվել հանքագործական, մշակող արդյունաբերություններում և

էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրություն և բաշխում ճյուղում, համապատասխանաբար 7.4, 1.8 և 10.2 տոկոս: Արտահանվել է իրացված արդյունաբերական արտադրանքի<sup>1</sup> 32.2%-ը նախորդ տարվա 30.7 տոկոսի դիմաց, ընդ որում 10.4%-ը՝ ԱՊՀ երկրներ, իսկ 21.8%-ը՝ այլ երկրներ:

Մշակող արդյունաբերության երկու խոշոր ենթաճյուղերում՝ «Սննդամթերքի, ներառյալ խմիչքների, արտադրություն» և «Մետաղագործական արդյունաբերություն» գրանցվել է արտադրության ծավալների աճ, համապատասխանաբար 11.0 և 0.8 տոկոսով: Ծխախոտային արտադրատեսակների արտադրությունում գրանցվել է 8.3% անկում, իսկ քիմիական արդյունաբերությունն աճել է 59.3%-ով:

Ֆինանսավորման բոլոր աղբյուրներից իրականացված կապիտալ շինարարության ծավալները կազմել են շուրջ 32.2 մլրդ դրամ և նախորդ տարվա համեմատ ավելացել 16.4%-ով: Ըստ ֆինանսավորման աղբյուրների իրականացված կապիտալ շինարարության կառուցվածքում բնակչության միջոցները կազմել են 13.3% և նվազել 67.1%-ով, կազմակերպությունների միջոցները՝ 73.9% և աճել 92.0%-ով, իսկ Համաշխարհային բանկի վարկի միջոցները՝ 2.0% և նվազել 10.2%-ով: Պետական բյուջեի միջոցների հաշվին շինարարության ծավալները կազմել են ավելի քան 3.0 մլրդ դրամ և նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել 2.6 անգամ:

Շինարարության ծավալները ըստ տնտեսության ճյուղերի ունեցել են հետևյալ կառուցվածքը.



<sup>1</sup> Ըստ 2100 արդյունաբերական կազմակերպություններից ստացված հաշվետվությունների տվյալների:

2007 թվականի առաջին երեք ամիսների ընթացքում հանրապետությունում տեղի ունեցած շինարարությունը հիմնականում կենտրոնացած է եղել Երևանում (շուրջ 80%), իսկ մարզերից առանձնացել է Սյունիքը (7.5%):

Գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալը 2007 թվականի հունվար-մարտին նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ աճել է 2.2%-ով: Աճը ապահովվել է անասնաբուծության ճյուղի շնորհիվ, որը 2006 թվականի նույն ժամանակահատվածի նկատմամբ աճել է 3.8%-ով:

### **Աշխատանքի շուկա**

Ընթացիկ տարվա առաջին եռմասյակում գործազրկության պաշտոնական մակարդակը հանրապետությունում նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ կրճատվել է 0.3 տոկոսային կետով և կազմել 7.2% (84.7 հազար մարդ):

2007 թվականի հունվար-մարտին 2006 թվականի նույն ժամանակաշրջանի նկատմամբ բնակչության դրամական եկամուտները աճել են 23.3%-ով, իսկ դրամական ծախսերը՝ 21.4%-ով, կազմելով համապատասխանաբար՝ 373.8 և 384.5 մլրդ դրամ: Նույն ժամանակաշրջանում բնակչության իրական տնօրինվող դրամական եկամուտները աճել են 17.1%-ով:

2007 թվականի հունվար-մարտին միջին ամսական անվանական աշխատավարձը 2006 թվականի հունվար-մարտին գրանցված ցուցանիշի նկատմամբ աճել է 19.7%-ով, ընդ որում բյուջետային հատվածի աշխատավարձը աճել է 17.4%-ով: Հաշվետու ժամանակահատվածում տնտեսության բյուջետային և ոչ բյուջետային հատվածներում միջին աշխատավարձը համապատասխանաբար կազմել է 52274 դրամ և 86433 դրամ, իսկ միջին աշխատավարձը՝ 69900 դրամ: Սոցիալական ոլորտի ճյուղերում աշխատողների միջին ամսական անվանական աշխատավարձը 2007 թվականի հունվար-փետրվարին կազմել է 48795 դրամ՝ աճելով 2006 թվականի նույն ժամանակաշրջանի նկատմամբ 29.6%-ով:

### **Ֆինանսական հատված**

2007 թվականի մարտի վերջում փողի բազան կազմել է 264.8 մլրդ. դրամ՝ տարեսկզբի նկատմամբ նվազելով 6.4%-ով: Նույն ժամանակահատվածում գրանցվել է ԿԲ-ից դուրս կանխիկի 4.7%-ով նվազում: Արդյունքում կանխիկի տեսակարար կշիռը փողի բազայում տարեսկզբի նկատմամբ աճել է 1.5 տոկոսային կետով՝ կազմելով 81.6%:

2007 թվականի առաջին եռամսյակի վերջում փողի զանգվածը 2006 թվականի դեկտեմբերի 31-ի նկատմամբ նվազել է 0.6%-ով: Շրջանառությունում կանխիկն այս ընթացքում նվազել է 4.6%-ով, իսկ բանկային համակարգի զուտ արտաքին ակտիվները նվազել են 2.8%-ով, իսկ զուտ ներքին ակտիվներն աճել՝ 4.1%-ով:

2007 թվականի մարտին 2006 թվականի դեկտեմբերի համեմատ սպառողական գների ինդեքսը կազմել է 102.0%, ինչը 0.8 տոկոսային կետով նվազել է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համապատասխան ցուցանիշից (102.8%): Սպառողական գների ինդեքսը 2007 թվականի հունվար-մարտին 2006 թվականի հունվար-մարտի համեմատ կազմել է 104.8%:

### Ֆինանսական շուկա

2007 թվականի առաջին եռամսյակում ՀՀ պետական (շուկայական) պարտատոմսերի շուկայում նկատվել է տոկոսադրույքների աճ: Այսպես, եթե 2006 թվականի հունվար-մարտ ամիսների ընթացքում տեղաբաշխված պետական արժեթղթերի միջին եկամտաբերությունը կազմել է 5.6%, ապա 2007 թվականի նույն ժամանակահատվածում այն կազմել է 6.9%: 2007 թվականի առաջին եռամսյակում տեղաբաշխված պետական արժեթղթերի ծավալը կազմել է 9.0 մլրդ դրամ: Հաշվետու ժամանակահատվածում տեղաբաշխված պետական արժեթղթերի միջին ժամկետայնությունը կազմել է 1405 օր՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ նվազելով 230 օրով:

2007 թվականի առաջին եռամսյակում պետական (շուկայական) պարտատոմսերի նկատմամբ պահանջարկը գերազանցել է թողարկման ցուցանիշը 2.7 անգամ, իսկ տեղաբաշխում/թողարկում հարաբերակցության միջին մեծությունը կազմել է 1.0:

Եթե առևտրային բանկերի մինչև մեկ տարի ժամկետով դրամով տրամադրված վարկերի տոկոսադրույքները 2006 թվականի դեկտեմբերին կազմել էին 17.20%, ապա 2007 թվականի հունվարին՝ 17.01%, իսկ մարտին՝ 18.35%: Նույն ժամանակաշրջանում գրանցվել է առևտրային բանկերի մինչև մեկ տարի ժամկետով դրամով ներգրավված ավանդների տոկոսադրույքների աճ: Այսպես, եթե 2006 թվականի դեկտեմբերին կազմել է 5.59%, 2007 թվականի հունվարին՝ 5.80%, ապա մարտին ավանդների տոկոսադրույքը կազմել է 6.03%: Առևտրային բանկերի վարկերը 2007 թվականի առաջին եռամսյակի վերջի դրությամբ կազմել են 272.7 մլրդ դրամ, որի 45.4%-ը կազմել է արտարժույթով վարկերը: Առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներից և ոչ ռեզիդենտներից ներգրավված ավանդները 2007 թվականի առաջին եռամսյակի վերջի դրությամբ կազմել են 312.8 մլրդ. դրամ, որից 52.1%-ը արտարժույթով ավանդներն են:

**Ֆինանսական շուկայի տոկոսադրույքները 2007 թվականի առաջին եռամսյակի ընթացքում**

Ամիսներ	հունվար	փետրվար	մարտ
Առևտրային բանկերի վարկեր	17.01	17.65	18.35
Առևտրային բանկերի ավանդներ	5.80	5.90	6.03
ՀՀ ԿԲ ռեպո գործառնություններ	4.75	4.75	4.75

**Փոխարժեք**

2007 թվականի հունվար-մարտ ամիսների ընթացքում ՀՀ դրամ/ ԱՄՆ դոլար հաշվարկային փոխարժեքը դրսևորել է տատանողական վարքագիծ: Այսպես, եթե հունվար ամսին 1 ԱՄՆ դոլարի դիմաց միջին հաշվարկային փոխարժեքը կազմել է 364 ՀՀ դրամ, իսկ փետրվարին՝ 356 ՀՀ դրամ, ապա մարտին միջին հաշվարկային փոխարժեքը կազմել է 359 ՀՀ դրամ: Հունվար-մարտ ամիսներին ՀՀ դրամ/ ԱՄՆ դոլար միջին հաշվարկային փոխարժեքը կազմել է 359.44 դրամ, ինչը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի փոխարժեքի նկատմամբ արժեքավորվել է 20.3%-ով:

**Արտաքին հատված**


2007 թվականի հունվար-մարտին արտաքին ապրանքաշրջանառությունը նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածի նկատմամբ աճել է 44.4%-ով և կազմել է շուրջ 876 մլն ԱՄՆ դոլար: Ընդ որում, արտահանումը կազմել է 231.2 մլն ԱՄՆ դոլար՝ աճելով 25.1%-ով, իսկ ներմուծումը կազմել է 645.2 մլն ԱՄՆ դոլար՝ աճելով 52.9%-ով: Արտահանման կառուցվածքում նվազել է «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարերի, թանկարժեք մետաղների և դրանցից իրերի» և «Հանքահումքային արտադրանքի» կշիռը: Արտաքին առևտրաշրջանառության աճը պայմանավորված էր ներմուծման առաջանցիկ աճով և իր մեծ տեսակարար կշիռով ապրանքաշրջանառության մեջ<sup>2</sup>:

<sup>2</sup> Նախորդ երեք տարիների առաջին երեք ամիսների միջին ապրանքաշրջանառության համեմատ 2007 թվականի հունվար-մարտին վերջինիս 62.5 տոկոս աճի 52.7 տոկոսային կետը ապահովվել է ներմուծման և 9.8 տոկոսային կետը արտահանման հաշվին:

**2004 – 2007 թվականներին հունվար-մարտի ընթացքում արտաքին առևտրի հիմնական միտումներ**

	Ապրանքախմբերի մասնակցությունը ընդհանուր աճում (տոկոսային կետ)			
	2004	2005	2006	2007
Ընդամենը արտահանում, այդ թվում հետևյալ խմբերի հաշիվ՝	100	100	100	100
Պատրաստի սննդի արտադրանքի	25.7	0.9	-1.6	34.3
Թանկ. և կիսաթանկ քարերի, թանկ. մետաղների և դրանցից իրերի	108.5	27.3	-109.2	-5.3
<i>այդ թվում՝ ադամանդի</i>		41.5	-82.0	8.3
Ոչ թանկարժեք մետաղների և դրանցից պատրաստված իրերի	94.6	78.1	39.4	32.9
Հանքահումքային արտադրանքի	59	0.5	24.5	7.8
Այլ ապրանքախմբերի	29.1	6.8	25.9	46.0
Ընդամենը ներմուծում, այդ թվում հետևյալ խմբերի հաշիվ՝	100	100	100	100
Պատրաստի սննդի արտադրանքի	13.5	10.4	4.0	9.2
Թանկ. և կիսաթանկ քարերի, թանկ. մետաղների և դրանցից իրերի	-19.5	39.1	-55.7	-2.2
<i>այդ թվում՝ ադամանդի</i>		38.6	-47.8	-5.6
Ոչ թանկարժեք մետաղների և դրանցից պատրաստված իրերի	-0.2	-4.7	45.0	1.8
Հանքահումքային արտադրանքի	10.1	14.8	25.3	27.8
Այլ ապրանքախմբերի հաշիվ	96	40.5	81.4	63.4

Առևտրային հաշվեկշռի բացասական մնացորդը կազմել է 413.9<sup>3</sup> մլն. դոլար և նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածի համեմատ աճել 74.5%-ով: Աճին ամենամեծ նպաստում ունեցած ապրանքախմբերն են՝ «Հանքահումքային արտադրանքը» ու «Մեքենաներ, սարքավորումներ, մեխանիզմներ», «Տրանսպորտի միջոցներ», «Սարքեր և ապարատներ» ընդգրկող խմբի բացասական մնացորդի աճը, համապատասխանաբար 27.7 և 20.0 տոկոսային կետով: Աճին ամենամեծ զսպում ցուցաբերած ապրանքախումբն է՝ «Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» խումբը<sup>4</sup>:




<sup>3</sup> Ըստ նախնական տվյալների արտաքին առևտրի հաշվեկշիռը (արտահանումը և ներմուծումը հաշվարկված ՖՕՔ գներով) կազմել է 332.6 մլն. դոլար:

<sup>4</sup> Գծապատկերում դրական նշանը ցույց է տալիս պակասորդի աճը:


Հաշվեկշռի բացասական մնացորդի ձևավորմանը մեծապես նպաստել է հետևյալ արտերկրների հետ առևտրի բացասական մնացորդը՝ Ղազախստան, Ռուսաստան, Չինաստան, Ռուսաստանի Դաշնություն, Ֆրանսիա, ԱՄՆ, Իրան: Առևտրային հաշվեկշիռը դրական էր Նիդեռլանդների, Շվեյցարիայի, Վրաստանի, Իսպանիայի, Կանադայի և Լյուքսեմբուրգի հետ (ըստ դրական հաշվեմնացորդի նվազման կարգի):

Բացարձակ արժեքով արտաքին առևտրաշրջանառության դինամիկան 1999-2007 թվականների հունվար-մարտ ամիսներին ներկայացված է ստորև բերված պատկերում:



## ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ

2007 թվականի առաջին եռամսյակում ՀՀ պետական բյուջեի եկամուտներն ու պաշտոնական տրանսֆերտները կազմել են շուրջ 114.4 մլրդ դրամ՝ ապահովելով առաջին եռամսյակի համար նախատեսված մուտքերի 107.1% կատարողական: Ընդ որում, ծրագրի գերազանցում է արձանագրվել պետական տուրքի, ոչ հարկային եկամուտների և կապիտալի գործառնություններից եկամուտների գծով: Հարկային եկամուտները և պաշտոնական տրանսֆերտները նույն ժամանակահատվածում փոքր-ինչ զիջել են ծրագրված ցուցանիշները: 2006 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ պետական բյուջեի եկամուտներն ավելացել են 38.7%-ով կամ 31.9 մլրդ դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է հարկային եկամուտների աճով: Ընդ որում, հարկատեսակների մեծ մասի գծով արձանագրվել են աճի բարձր տեմպեր: 2006 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ հարկային եկամուտներն աճել են 26.9%-ով կամ 19.1 մլրդ դրամով<sup>5</sup>, պետական տուրքը՝ 15.4%-ով կամ 564.4 մլն դրամով, ոչ հարկային եկամուտները՝ 162%-ով կամ 7.2 մլրդ դրամով, կապիտալի գործառնություններից եկամուտները՝ 77.5%-ով կամ 2.0 մլրդ դրամով և պաշտոնական տրանսֆերտները՝ 4.8 անգամ կամ 3.1 մլրդ դրամով:




<sup>5</sup> Քանի որ 2007 թվականի պետական բյուջեի եկամուտներում ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության աշխատողների նյութական խրախուսման և/կամ համակարգի զարգացման նպատակային ֆոնդի միջոցները ներառվել են հարկային եկամուտներում, 2006 և 2007 թվականների ցուցանիշների համադրելիության նկատառումով 2006 թվականի ցուցանիշներում նույնպես կատարվել է նշված փոփոխությունը:




Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ՀՀ պետական բյուջեի եկամուտներում 8.1 տոկոսային կետով նվազել է հարկային եկամուտների և պետական տուրքերի տեսակարար կշիռը, իսկ ոչ հարկային եկամուտների, կապիտալի գործառնություններից եկամուտների և պաշտոնական տրանսֆերտների տեսակարար կշիռն աճել է համապատասխանաբար 4.8, 0.9 և 2.4 տոկոսային կետով:

**Պետական բյուջեի եկամուտների կառուցվածքը**



Պետական բյուջեի եկամուտների կառուցվածքը որոշակիորեն տարբերվում է նաև ծրագրվածից: Ոչ հարկային եկամուտների զգալի աճի արդյունքում հարկային եկամուտների տեսակարար կշիռը զիջում է նաև ծրագրված ցուցանիշը՝ 5.6 տոկոսային կետով, իսկ ոչ հարկային եկամուտների տեսակարար կշիռը 6.3 տոկոսային կետով գերազանցում է ծրագրված ցուցանիշը<sup>6</sup>:




<sup>6</sup> Ծրագրային ցուցանիշների հետ համադրելիության նպատակով «Արմենթել» ՓԲԸ-ի հետ կնքված հաշտության համաձայնությամբ վճարված 4.6 մլրդ դրամը ոչ հարկային եկամուտների փաստացի մուտքերում հաշվի չի առնվել:


**Հարկային եկամուտներ**

2007 թվականի առաջին եռամսյակում ՀՀ պետական բյուջեի հարկային եկամուտները կազմել են ավելի քան 90.1 մլրդ դրամ՝ 99.9%-ով ապահովելով ՀՀ կառավարության կողմից իր լիազորությունների շրջանակներում ճշտված ծրագիրը: Նախորդ տարվա առաջին եռամսյակի համեմատ, ինչպես նշվել է, պետական բյուջեի հարկային եկամուտների աճը կազմել է 26.9% կամ 19.1 մլրդ դրամ: Ընդ որում, բոլոր հարկատեսակների գծով արձանագրվել է մուտքերի աճ, բացառությամբ ակցիզային հարկի և ճանապարհային վճարների: Ընդ որում, աճի հիմնական աղբյուր է հանդիսացել ավելացած արժեքի հարկը, այնուհետև՝ շահութահարկը:

**Հարկատեսակների ներդրումը հարկային եկամուտների աճի մեջ**



**Հարկային եկամուտների կառուցվածքը**



Ավելացված արժեքի հարկից հաշվետու եռամսյակում պետական բյուջե է մուտքագրվել շուրջ 44.6 մլրդ դրամ՝ ապահովելով հարկային եկամուտների 49.5%-ը՝ նախորդ տարվա 44.8%-ի դիմաց: Ավելացված արժեքի հարկի մուտքերից ավելի քան 25.9

մլրդ դրամը ստացվել է ՀՀ սահմանին հարկումից, 18.6 մլրդ դրամը՝ ապրանքների և ծառայությունների ներքին շրջանառությունից: 2006 թվականի առաջին եռամսյակի համեմատ ավելացված արժեքի հարկի մուտքերն աճել են 40.0%-ով կամ ավելի քան 12.7 մլրդ դրամով: Մասնավորապես, հարկային մարմինների կողմից ապահովված մուտքերն ավելացել են 22.7%-ով կամ 4.8 մլրդ դրամով, իսկ մաքսային սահմանին գանձված գումարը՝ 74.4%-ով կամ 7.9 մլրդ դրամով:

2007 թվականին պահպանվել է 2004 թվականից արձանագրված՝ *շահութահարկի* բարձր աճի միտումը: Այս հարկատեսակի գծով պետական բյուջե է մուտքագրվել շուրջ 15.5 մլրդ դրամ՝ ապահովելով հարկային եկամուտների 17.2%-ը, որը 1.0 տոկոսային կետով գերազանցում է նախորդ տարվա նույն ցուցանիշը: 2006 թվականի առաջին եռամսյակի համեմատ շահութահարկն աճել է 34.4%-ով կամ շուրջ 4.0 մլրդ դրամով: Աճը հիմնականում պայմանավորված է ոչ պետական, այդ թվում՝ նաև օտարերկրյա ներդրումներով ձեռնարկությունների վճարումների, ինչպես նաև նվազագույն շահութահարկի վճարման պահանջից ելնելով՝ մեկ տոկոս դրույքաչափով վճարված շահութահարկի աճով: Նախորդ տարվա համեմատ ավելացել են նաև մյուս աղբյուրներից ստացված շահութահարկի գումարները, բացառությամբ պետական ձեռնարկությունների վճարումների:

Հաշվետու ժամանակահատվածում *եկամտահարկի* գծով պետական բյուջեի մուտքերը կազմել են ավելի քան 8.4 մլրդ դրամ՝ ապահովելով հարկային մուտքերի 9.4%-ը՝ նախորդ տարվա 10.7%-ի դիմաց: Նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածի համեմատ եկամտահարկն աճել է 11.3%-ով կամ 857.8 մլն դրամով: Աճը հիմնականում ապահովվել է աշխատանքային և քաղաքացիաիրավական պայմանագրերի կատարումից ստացված եկամուտների աճի հաշվին, որը կազմել է 11.0% կամ 782.1 մլն դրամ:

*Ակցիզային հարկն* ապահովել է պետական բյուջեի հարկային եկամուտների 9.4%-ը՝ 3.3 տոկոսային կետով զիջելով նախորդ տարվա ցուցանիշը: Այս հարկատեսակից հաշվետու եռամսյակում պետական բյուջե է մուտքագրվել շուրջ 8.5 մլրդ դրամ: Ընդ որում, հանրապետություն ներմուծված ենթաակցիզային ապրանքների հարկումից ստացվել է շուրջ 5.9 մլրդ դրամ, որից 2.7 մլրդ դրամը՝ բենզինի ու դիզելային վառելիքի և 2.5 մլրդ դրամը՝ ծխախոտի ներմուծման հարկումից: Հանրապետությունում արտադրվող ենթաակցիզային ապրանքների հարկումից պետական բյուջեի ակցիզային հարկի մուտքերը կազմել են շուրջ 2.6 մլրդ դրամ, որից 1.1 մլրդ դրամը ստացվել է ծխախոտի իրացումից: Նախորդ տարվա առաջին եռամսյակի համեմատ ակցիզային հարկը նվազել է 6.0%-ով կամ 546.2 մլն դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է ներքին արտադրության ակտիվային խմիչքների իրացումից մուտքերի նվազմամբ, ինչպես նաև ծխախոտի ներմուծման և արտադրության

ծավալների անկմամբ: Միևնույն ժամանակ, ներմուծվող ալկոհոլային խմիչքներից ստացված ակցիզային հարկի գծով գրանցվել է մուտքերի աճ:

2007 թվականի առաջին եռամսյակում պետական բյուջե է մուտքագրվել շուրջ 4.5 մլրդ դրամ *մաքսատուրք*՝ ապահովելով հարկային եկամուտների 4.9%-ը՝ նախորդ տարվա 5.1%-ի դիմաց: Ներմուծման աճի հետ կապված՝ 2006 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ մաքսատուրքի գծով բյուջետային մուտքերն ավելացել են 22.5%-ով կամ 817.2 մլն դրամով:

2007 թվականի առաջին եռամսյակում գործունեության առանձին տեսակների համար օրենքով սահմանված *հաստատագրված վճարների գծով* պետական բյուջե է մուտքագրվել շուրջ 3.9 մլրդ դրամ՝ ապահովելով հարկային եկամուտների 4.4%-ը՝ նախորդ տարվա 4.6%-ի դիմաց: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ արձանագրվել է հաստատագրված վճարների 19.2% աճ: Վերջինիս հիմնականում պայմանավորված է ավտոտրանսպորտային միջոցների գազալցման, վիճակախաղերի և դրամական շահումով խաղերի կազմակերպման, տրանսպորտային գործունեության, ինչպես նաև առևտրի վայր և հանրային սննդի ոլորտի գործունեություն կազմակերպելու համար կատարված վճարումների ավելացմամբ:

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ պետական բյուջե են մուտքագրվել ավելի քան 1.4 մլրդ դրամի *բնօգտագործման և բնապահպանական* վճարներ, որոնք 2006 թվականի միևնույն ժամանակահատվածի համեմատ աճել են 21.3%-ով: Վերջինս հիմնականում պայմանավորված է ավտոտրանսպորտից արտանետվող վնասակար նյութերի համար գանձած եկամուտների աճով: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ բնօգտագործման և բնապահպանական վճարների աճը կազմել է 21.6%: Բնապահպանական վճարների վրա դրական ազդեցություն է գործել «Բնապահպանական վճարների դրույքաչափերի մասին» ՀՀ նոր օրենքը: Մասնավորապես, փոփոխվել են ջրային ավազան վնասակար նյութերի և միացությունների յուրաքանչյուր տոննայի արտանետման համար վճարի դրույքաչափերը, ինչպես նաև ֆիզիկական և իրավաբանական անձանց պատկանող Հայաստանի Հանրապետությունում հաշվառված և շահագործվող մարդատար և բեռնատար ավտոտրանսպորտային միջոցներից վնասակար նյութերի արտանետման դիմաց սահմանված դրույքաչափերը: Վերջիններիս նկատմամբ սահմանվել են բազմապատիկ գործակիցներ՝ կախված ավտոտրանսպորտային միջոցների շարժիչների տեսակներից: Միաժամանակ, շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների մասով՝ Հայաստանի Հանրապետություն ներմուծվող տրանսպորտային միջոցների մաքսային արժեքի նկատմամբ սահմանվել են 2, 10 և 20 տոկոս դրույքաչափեր՝ կախված դրանց թողարկման տարեթվից:

Հաշվետու ժամանակահատվածում պետական բյուջե է մուտքագրվել ավելի քան 2.1 մլրդ դրամ *պարզեցված հարկ*՝ ապահովելով հարկային եկամուտների 2.0%-ը: Նշված գումարից 1.3 մլրդ դրամը ստացվել է խանութների և կրպակների միջոցով իրականացվող առևտրական գործունեությունից: Նշված ոլորտից ստացված մուտքերի աճի արդյունքում նախորդ տարվա առաջին եռամսյակի համեմատ պարզեցված հարկն աճել է 21.4%-ով կամ 374.3 մլն դրամով:

Հաշվետու ժամանակահատվածում *ճանապարհային վճարներից* պետական բյուջեի մուտքերը կազմել են շուրջ 322.8 մլն մլրդ դրամ, որոնք 2006 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ նվազել են 27.6%-ով կամ 123.2 մլն դրամով:

*Այլ հարկերից* պետական բյուջե է մուտքագրվել շուրջ 865.5 մլն դրամ, որոնք 2006 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ աճել են 16.5%-ով կամ 122.5 մլն դրամով: Աճը պայմանավորված է հարկային օրենսդրության խախտման համար գանձվող տուգանքների ավելացմամբ:

Հաշվետու ժամանակահատվածում պետական տուրքը կազմել է ավելի քան 4.2 մլրդ դրամ, որի եռամսյակային ծրագիրը կատարվել է 120.7%-ով: Ծրագրի գերազանցումը հիմնականում պայմանավորված է ՀՀ-ից օդային տրանսպորտի միջոցներով ֆիզիկական անձանց ելքի, լիցենզավորման, պետական գրանցման և հյուպատոսական ծառայությունների կամ գործողությունների համար վճարված տուրքերի բարձր ցուցանիշներով: Նշված եկամտատեսակները զգալի աճ են ապահովել նաև 2006 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ, ինչի արդյունքում պետական տուրքերի ընդհանուր գումարն ավելացել է 15.4%-ով կամ 564.4 մլն դրամով:

Պետական բյուջեի ոչ հարկային եկամուտները 2007 թվականի առաջին եռամսյակում կազմել են շուրջ 11.6 մլրդ դրամ՝ 107.4%-ով գերազանցելով եռամսյակային ծրագիրը և 2.6 անգամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշը: Ոչ հարկային եկամուտների նման բարձր ցուցանիշը հիմնականում պայմանավորված է «Արմենթել» ՓԲԸ-ի հետ կնքված հաշտության համաձայնությամբ ընթացիկ տարում վճարված գումարով, որը կազմում է ավելի քան 4.6 մլրդ դրամ: Առանց նշված գումարի, ոչ հարկային եկամուտների կատարողականը կազմում է 124.8%, իսկ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճը՝ 57.7%: Նշված ցուցանիշներն արձանագրվել են հիմնականում ազատ բյուջետային միջոցների տեղաբաշխումից ստացված տոկոսավճարների աճի արդյունքում, որոնք կազմել են 771.5 մլն դրամ՝ շուրջ 734.5 մլն դրամով գերազանցելով ծրագրված (37 մլն դրամ) և 740.0 մլն դրամով՝ նախորդ տարվա (31.4 մլն դրամ) նույն ցուցանիշը: Բացի այդ, եկամուտների աճ է արձանագրվել նաև ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի ծախսերի

նկատմամբ եկամուտների գերազանցումից մուտքերի (աճել են 50.2%-ով կամ 120.1 մլն դրամով), պետական ձեռնարկությունների և գույքի (բացառությամբ հողի) վարձակալությունից եկամուտների (աճել են 39.1%-ով կամ 18.4 մլն դրամով), պետության տված վարկերի օգտագործման դիմաց ռեզիդենտների կողմից վճարված տոկոսների (աճել են 32.7%-ով կամ 34 մլն դրամով), իրավախախտումների համար գործադիր և դատական մարմինների կողմից կիրառվող պատժամիջոցներից մուտքերի (աճել են 24.7%-ով կամ 98.2 մլն դրամով), ինչպես նաև այլ ոչ հարկային եկամուտների (աճել են 82.6%-ով կամ 2.3 մլրդ դրամով) գծով: Նշված մուտքերը գերազանցել են նաև առաջին եռամսյակի ծրագիրը՝ համապատասխանաբար 93, 79.8, 53.5, 49.9 և 4.1 տոկոսով:

Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ոչ հարկային եկամուտների նվազում է նկատվել, մասնավորապես, տիրագուրկ, ժառանգության իրավունքով, ինչպես նաև ֆիզիկական և իրավաբանական անձանցից (բացառությամբ ՀՀ համայնքների, միջազգային կազմակերպությունների և օտարերկրյա պետությունների) նվիրատվության կարգով պետությանը որպես սեփականություն անցած դրամական միջոցներից, հիմնական միջոց կամ ոչ նյութական ակտիվ չհանդիսացող գույքի օտարումից մուտքերի գծով, որոնք կազմել են 29.8 մլն դրամ և 597.2 մլն դրամով զիջել նախորդ տարվա նույն ցուցանիշը: Վերջինս պայմանավորված է այն հանգամանքով, որ 2006 թվականի նույն ժամանակահատվածում ՎԶԵԲ «Զվարթնոց» բեռնային համալիրի վարկային ծրագրի սպասարկման նպատակով «Արմենիա» միջազգային օդանավակայաններ ՓԲԸ-ի կողմից 2006 թվականի նույն ժամանակահատվածում ՀՀ կառավարությանը տրամադրվել էր 511.0 մլն դրամի նվիրատվություն: Առանց վերջինիս նշված եկամուտների անկումը կազմում է 74.3% կամ 86.3 մլն դրամ: 2006 թվականի առաջին եռամսյակի համեմատ նվազել են նաև բաժնետիրական կապիտալում կատարված ներդրումներից ստացվող դիվիդենդները (83.3%-ով կամ 133.5 մլն դրամով), պետական պահուստի հողերի վարձակալության և օգտագործման վարձավճարները (41.3%-ով կամ 4.6 մլն դրամով) և ոչ ռեզիդենտներին տրամադրված վարկերի օգտագործման տոկոսավճարները (7.7%-ով կամ 4.5 մլն դրամով):

Հաշվետու ժամանակահատվածում կապիտալի գործառնություններից պետական բյուջեի եկամուտները կազմել են ավելի քան 4.5 մլրդ դրամ, որից 4.1 մլրդ դրամը ստացվել է պետական սեփականություն հանդիսացող հողերի օտարումից, 408.0 մլն դրամը՝ հիմնական միջոցների վաճառքից: Նշենք, որ կապիտալի գործառնություններից եկամուտների եռամսյակային ծրագիրը կատարվել է 133.9%-ով՝ պայմանավորված Երևանի տարածքում գտնվող հողերի վաճառքից ստացված մուտքերի բարձր մակարդակով: Արդյունքում կապիտալի գործառնություններից փաստացի մուտքերը գերազանցել են նաև նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշը՝ 77.5%-ով կամ 2.0 մլրդ դրամով:


Հաշվետու ժամանակահատվածում արտաքին աղբյուրներից տրամադրվել են 3.9 մլրդ դրամ պաշտոնական տրանսֆերտներ՝ կազմելով ծրագրի 96.4%-ը: Նշված գումարի հիմնական մասը՝ 2.3 մլրդ դրամը, տրամադրվել է Լիմսի հիմնադրամի կողմից՝ կրթական հաստատությունների վերականգնման, ճանապարհների վերանորոգման և Երևանի փողոցների վերանորոգման ծրագրերի շրջանակներում: Նշենք, որ այս ծրագրերը նախատեսվել էին 2006 թվականի պետական բյուջեով, սակայն համաձայնագրի ուշ ստորագրման հետ կապված՝ ըստ էության սկսել են իրականացվել ընթացիկ տարվանից: Հաշվետու ժամանակաշրջանում 750.8 մլն դրամ է տրամադրվել ԱՄՆ կառավարության «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամի կողմից, որը կազմել է ծրագրվածի 89.6%-ը: 211.7 մլն դրամ է տրամադրվել Հայաստանի Հանրապետության ու Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության միջև ստորագրված՝ աղքատության հաղթահարման նպատակով բյուջեին աջակցության մասին փոխըմբռնման հուշագրի շրջանակներում, որի ստացումը նախատեսված էր չորրորդ եռամսյակում: Մեծ Բրիտանիայի կողմից Տավուշի և Գեղարքունիքի մարզերում մարզային զարգացման ծրագրերի ֆինանսավորման համար նախատեսված 165.3 մլն դրամի դրամաշնորհը հաշվետու ժամանակահատվածում չի ստացվել: Եվս 564.5 մլն դրամ ստացվել է մի շարք այլ նպատակային ծրագրերի շրջանակներում՝ կազմելով նախատեսվածի 88.1%-ը: 4.6 մլն դրամ հաշվետու ժամանակահատվածում մուտքագրվել է պետական հիմնարկների արտաբյուջետային հաշիվներին:

## ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ

2007 թվականի առաջին եռամսյակում ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին կատարվել են 100.7 մլրդ դրամի ծախսեր: Տրամադրված միջոցների 77.8%-ն ուղղվել է ընթացիկ, 17.7%-ը՝ կապիտալ ծախսերի ֆինանսավորմանը, 4.5%-ը՝ զուտ վարկավորմանը: Ծախսերի եռամսյակային ծրագիրը կատարվել է 77.3%-ով, որը հիմնականում կապիտալ ծախսերի և ծառայությունների ձեռք բերման ծախսերի ցածր կատարողականի արդյունք է: Բյուջետային ծախսերի արձանագրված կատարողականը մասամբ արտաքին աջակցությամբ իրականացվող որոշ վարկային և դրամաշնորհային ծրագրերի կատարողականի հետևանք է: Միևնույն ժամանակ, հարկ է նշել, որ հաշվետու ժամանակահատվածում սահմանված կարգով գրանցված բոլոր պարտավորություններն ամբողջությամբ ֆինանսավորվել են:

Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ պետական բյուջեի ծախսերն ավելացել են 20.1%-ով, որը կազմում է ավելի քան 16.8 մլրդ դրամ: Աճը հիմնականում պայմանավորված է կապիտալ ծախսերի, ծառայությունների ձեռք բերման ծախսերի և տրանսֆերտների աճով: Նշված միտումների արդյունքում 2006 թվականի առաջին եռամսյակի համեմատ բյուջետային ծախսերի կառուցվածքը զգալի փոփոխություն է կրել. դրանում 7.7 տոկոսային կետով աճել է կապիտալ ծախսերի տեսակարար կշիռը և 8.2 տոկոսային կետով նվազել է ընթացիկ ծախսերի տեսակարար կշիռը:

### ՀՀ պետական բյուջեի ծախսերի կառուցվածքը



Ընթացիկ ծախսերի ֆինանսավորմանը հաշվետու ժամանակահատվածում հատկացվել է շուրջ 78.4 մլրդ դրամ՝ ապահովելով եռամսյա ծրագրի 83.6% կատարողական:



Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ընթացիկ ծախսերն աճել են 8.7%-ով կամ 6.3 մլրդ դրամով:

Ընթացիկ ծախսերի 10.4%-ն ուղղվել է պետական հիմնարկների աշխատողների աշխատավարձերի վճարմանը, որը կազմել է 8.1 մլրդ դրամ և ապահովել եռամսյակային ծրագրի 86.3%-ը: Աշխատավարձի գծով ծախսերը 9.5%-ով ավելի են 2006 թվականի համապատասխան ցուցանիշից:

2007 թվականի առաջին եռամսյակում պետական բյուջեից տրամադրվել են շուրջ 3.5 մլրդ դրամի սուբսիդիաներ, որից 698.3 մլն դրամը կազմում են համայնքներին տրամադրված սուբվենցիաները, 2.8 մլրդ դրամը՝ կազմակերպություններին տրամադրված սուբսիդիաները: Սուբսիդիաների փաստացի ծախսերը 34.7%-ով զիջել են եռամսյակային ծրագիրը: Մասնավորապես, 44.9% է կազմել սուբվենցիաների, 73.6%՝ կազմակերպություններին տրամադրվող սուբսիդիաների կատարողականը: Շեղումը հիմնականում առաջացել է գյուղատնտեսության և սոցիալական ապահովության բնագավառների ծրագրերի գծով: 2006 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ պետական բյուջեից տրամադրված սուբսիդիաների գումարն ավելացել է 11%-ով կամ 344.5 մլն դրամով:

Հաշվետու ժամանակահատվածում շուրջ 2.1 մլրդ դրամ հատկացվել է պետական պարտքի սպասարկմանը, որը կազմել է եռամսյակային ծրագրի 94.5%-ը: Մասնավորապես, 1.2 մլրդ դրամը հատկացվել է ներքին, իսկ 848.2 մլն դրամը՝ արտաքին պարտքի սպասարկմանը: 2006 թվականի հունվար-մարտ ամիսների համեմատ պետական պարտքի սպասարկման ծախսերը նվազել են 15.1%-ով: Ընդ որում, անկում է արձանագրվել և՛ ներքին, և՛ արտաքին պարտքի սպասարկման ծախսերում:

2007 թվականի առաջին եռամսյակի պետական բյուջեի ընթացիկ ծախսերի 27%-ը կամ 21.2 մլրդ դրամ կազմել են ընթացիկ տրանսֆերտները՝ ապահովելով եռամսյակային ծրագրի 92% կատարողական: Տրանսֆերտային հատկացումների հիմնական մասը կատարվել է հետևյալ ուղղություններով. շուրջ 6.0 մլրդ դրամն ուղղվել է նպաստների, 4.4 մլրդ դրամը՝ թոշակների, 4.4 մլրդ դրամը՝ համայնքներին համահարթեցման սկզբունքով հատկացվող դոտացիաների ֆինանսավորմանը: 2006 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ տրանսֆերտներն աճել են 11.2%-ով, որում իրենց զգալի բաժինն ունեն դոտացիաները, թոշակներն ու այլ ընթացիկ տրանսֆերտները. հաշվետու ժամանակահատվածում դրանք ավելացել են համապատասխանաբար 20.6, 12.5 և 14.7 տոկոսով:

Ապրանքների և ծառայությունների ձեռք բերմանը պետական բյուջեից հատկացվել է 43.5 մլրդ դրամ, որը կազմում է պետական բյուջեի ընթացիկ ծախսերի 55.5%-ը: Ապրանքների և ծառայությունների ձեռք բերման ծախսերի եռամսյակային ծրագիրը

կատարվել է 80.8%-ով, իսկ նախորդ տարվա առաջին եռամսյակի համեմատ դրանք աճել են 8.6%-ով կամ 3.5 մլրդ դրամով: Այն հիմնականում պայմանավորված է կրթական և առողջապահական ծառայությունների ձեռք բերման ծախսերի աճով:

2007 թվականի առաջին եռամսյակում պետական բյուջեից 17.8 մլրդ դրամ տրամադրվել է կապիտալ ծախսերի ֆինանսավորմանը՝ կազմելով ծրագրի 55.8%-ը, որը պայմանավորված է աշխատանքների ցածր կատարողականով: 2006 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ կապիտալ ծախսերն ավելացել են 2.1 անգամ (9.4 մլրդ դրամով): Աճը հիմնականում պայմանավորված է ճանապարհային և ջրային տնտեսության, կրթության ու պաշտպանության ոլորտներում կատարված կապիտալ ծախսերի աճով:

2007 թվականի հաշվետու ժամանակահատվածում ՀՀ պետական բյուջեից վարկավորումը կազմել է շուրջ 4.7 մլրդ դրամ, որից 4.3 մլրդ դրամը տրամադրվել է ԼՂՀ-ին: 366.8 մլն դրամ է տրամադրվել Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Քաղաքային ջեռուցման և Գյուղական ձեռնարկությունների ու փոքրածավալ առևտրային գյուղատնտեսության զարգացման ծրագրերի շրջանակներում՝ կազմելով ծրագրվածի 88.8%-ը: Նախկինում տրամադրված վարկերից պետական բյուջե է վերադարձվել 110.3 մլն դրամ՝ նախատեսված 95.7 մլն դրամի փոխարեն: Արդյունքում գուտ վարկավորումը կազմել է 4.5 մլրդ դրամ կամ ծրագրվածի 98.7%-ը: Նախորդ տարվա առաջին եռամսյակի համեմատ պետական բյուջեի գուտ վարկավորման ծավալն ավելացել է 35%-ով՝ պայմանավորված ներքին և արտաքին վարկավորման աճով ու վարկերի վերադարձի նվազմամբ:

## Գործառական դասակարգում

2007 թվականի առաջին եռամսյակում ընդհանուր բնույթի պետական ծառայությունների գծով ՀՀ պետական բյուջեի ծախսերը կազմել են շուրջ 10.9 մլրդ դրամ՝ ապահովելով եռամսյակի ծրագրային ցուցանիշի կատարումը 77.8%-ով: Շեղումը հիմնականում առաջացել է օրենսդիր և պետական կառավարման մարմինների, պետական ֆինանսական կառավարման և արտաքին քաղաքական գործունեության ծրագրերի գծով: 2006 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ ընդհանուր բնույթի պետական ծառայությունների ծախսերն աճել են 15.1%-ով: Ընդ որում, բոլոր ենթախմբերում, բացի «Օրենսդիր մարմին, պետական կառավարում» ենթախմբից, արձանագրվել է ծախսերի աճ:

Օրենսդիր մարմնի և պետական կառավարման ծախսերը հաշվետու ժամանակահատվածում կազմել են ավելի քան 1.6 մլրդ դրամ՝ ապահովելով նախատեսված ծախսերի 63.2%-ը: Շեղումը հիմնականում առաջացել է ՀՀ Ազգային ժողովի և գործադիր իշխանության մարմինների պահպանման գծով, ինչը մեծ մասամբ տնտեսումների արդյունք է: Ենթախմբի կատարողականի վրա բացասաբար է անդրադարձել նաև վարչական օբյեկտների հիմնադրոգման աշխատանքների ցածր կատարողականը և նախատեսված վարչական օբյեկտների շինարարական աշխատանքների չիրականացումը: 2006 թվականի առաջին եռամսյակի համեմատ օրենսդիր մարմնի և պետական կառավարման ծախսերը նվազել են 8.9%-ով:

Հաշվետու ժամանակահատվածում պետական ֆինանսական կառավարման ոլորտին տրամադրվել է շուրջ 2.5 մլրդ դրամ, որը կազմել է առաջին եռամսյակի ծրագրային հատկացումների 70.0%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է պետական կառավարման մարմինների պահպանման, «ՀՀ 2007 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 18-րդ կետի համաձայն պետական բյուջեում ներառված՝ ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության (ՀՊԾ) և մաքսային պետական կոմիտեի (ՄՊԿ) նյութական խրախուսման և համակարգի զարգացման ֆոնդերի ծախսերի (որոնք համապատասխանաբար կատարվել են 49.2 և 44.2 տոկոսով) և Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Հանրային հատվածի ներքին աուդիտի իրականացման գծով դրամաշնորհային ծրագրի ցածր կատարողականով:

Արտաքին քաղաքական գործունեության ֆինանսավորման ծախսերը հաշվետու ժամանակահատվածում կազմել են ավելի քան 1.5 մլրդ դրամ՝ ապահովելով նախատեսված ծախսերի 68.8%-ը: Շեղումը հիմնականում առաջացել է դեսպանությունների շենքերի գնման ծրագրի ցածր կատարողականով, ինչպես նաև ՀՀ դեսպանությունների ու ներկայացուցչությունների պահպանման և արտասահմանյան պատվիրակությունների

ընդունելության ծախսերի տնտեսման արդյունքում: 2006 թվականի առաջին եռամսյակի համեմատ արտաքին քաղաքական գործունեության ֆինանսավորման ծախսերն աճել են 2.8%-ով:

Հաշվետու ժամանակահատվածում ընդհանուր բնույթի պետական ծառայությունների գծով կատարված ծախսերի 39.5%-ն ուղղվել է արտաքին տնտեսական աջակցությանը, որը կազմել է շուրջ 4.3 մլրդ դրամ: Արտաքին տնտեսական աջակցության շրջանակներում ԼՂՀ-ին նախատեսված 4.3 մլրդ դրամի միջպետական վարկն ամբողջությամբ տրամադրվել է՝ 21.7%-ով գերազանցելով նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշը:

Ընդհանուր բնույթի իրավական գործունեության ծրագրերի կատարողականը կազմել է 81.1% կամ 211.8 մլն դրամ, որը 21.2%-ով գերազանցել է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշը:

Ընտրությունների և հանրաքվեների բնագավառի ծախսերը կազմել են 89.3 մլն դրամ կամ ծրագրված ցուցանիշի 18.9%-ը: Շեղումը հիմնականում առաջացել է ՀՀ ԱԺ պատգամավորների ընտրությունների ծրագրի գծով:

Ընդհանուր բնույթի պետական այլ ծառայությունների ծախսերը 2007 թվականի առաջին եռամսյակում կազմել են 681.5 մլն դրամ կամ նախատեսվածից 3.5%-ով ավելի, ինչը պայմանավորված է Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող երկու դրամաշնորհային ծրագրերի գերակատարմամբ: Նշվածի արդյունքում ընդհանուր բնույթի պետական այլ ծառայությունների ծախսերը շուրջ 2.3 անգամ գերազանցել են նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշը:

Հաշվետու ժամանակահատվածում պաշտպանության բնագավառին հատկացվել է ավելի քան 15.6 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրի 80.4%-ով կատարում: Մասնավորապես, ռազմական կարիքներին հատկացվել է ավելի քան 14.7 մլրդ դրամ, իսկ պաշտպանության բնագավառի այլ ծախսերը կազմել են 871.8 մլն դրամ: Պաշտպանության բնագավառի ծախսերի ցուցանիշը 2006 թվականի առաջին եռամսյակի համեմատ ավելացել է շուրջ 993 մլն դրամով կամ 6.8%-ով: Իսկ դրանց տեսակարար կշիռը բյուջեի ծախսերում նախորդ տարվա համեմատ 1.9 տոկոսային կետով նվազել է և կազմել 15.5%:

Հասարակական կարգի պահպանության, անվտանգության և դատական գործունեության բնագավառին 2007 թվականի առաջին եռամսյակի ընթացքում ՀՀ պետական բյուջեից տրամադրվել է շուրջ 7.4 մլրդ դրամ՝ ապահովելով եռամսյակային ծրագրի 65.4% կատարում: Ընդ որում, բոլոր երեք ենթախմբերում առկա են ծրագրից շեղումներ: Խմբի ծախսերի 69.8%-ն ուղղվել է հասարակական կարգի պահպանության, 20.1%-ը՝ ազգային անվտանգության, 10.1%-ը դատական գործունեության ծախսերի

ֆինանսավորմանը: 2006 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ հասարակական կարգի պահպանության, ազգային անվտանգության և դատական գործունեության ծախսերի աճը կազմել է 11.2% կամ 753.4 մլն դրամ:

Հաշվետու ժամանակահատվածում ավելի քան 5.2 մլրդ դրամ տրամադրվել է հասարակական կարգի պահպանության բնագավառի ծրագրերին՝ նախատեսված 8.4 մլրդ դրամի դիմաց: Ծրագրից շեղման պատճառը հիմնականում հասարակական կարգի պահպանության ապահովման ծրագրի ցածր կատարողականն է: Ծախսերում ներառված են նաև «ՀՀ 2007 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 18-րդ կետով սահմանված վճարումները, որոնք կազմել են 832.1 մլն դրամ կամ նախատեսվածի 74%-ը: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ հասարակական կարգի պահպանության ուղղությամբ իրականացված ծախսերն ավելացել են 12.2%-ով կամ 567.4 մլն դրամով:

Ազգային անվտանգության ծախսերը կազմել են 1.5 մլրդ դրամ՝ ապահովելով եռամսյակային ծրագրի 82.3% կատարողական: 2006 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ դրանք ավելացել են 16.5%-ով կամ 213.5 մլն դրամով:

Դատական գործունեության ծախսերը հաշվետու ժամանակահատվածում կազմել են շուրջ 760.3 մլն դրամ, որը 40.0%-ով ցածր է նախատեսված ցուցանիշից: Շեղումն առաջացել է հիմնականում դատական իշխանության մարմինների, ՀՀ դատախազության և ՀՀ դատական դեպարտամենտի պահպանման, վարչական օբյեկտների շինարարության ու ՀԲ աջակցությամբ իրականացվող Դատաիրավական բարեփոխումների երկրորդ ծրագրերի գծով: Նշենք, որ ծախսերի ցածր ցուցանիշը մասամբ պայմանավորված է տնտեսումներով և որոշ ծրագրերի ցածր կատարողականով, մասամբ էլ՝ այն հանգամանքով, որ տրամադրված գումարները հաշվետու ժամանակահատվածում ամբողջությամբ չեն ծախսվել: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ դատական համակարգի ծախսերը նվազել են 3.5%-ով կամ 27.4 մլն դրամով:

2007 թվականի առաջին եռամսյակում ՀՀ պետական բյուջեից շուրջ 17.3 մլրդ դրամ ուղղվել է կրթության և գիտության ֆինանսավորմանը: Կառավարության կողմից սահմանված եռամսյակային ծրագիրը կատարվել է 91.3%-ով: Շեղումն առաջացել է հիմնականում հանրակրթության բնագավառի ծրագրերի, մասնավորապես, կրթական օբյեկտների շինարարության և հիմնանորոգման գծով: 2006 թվականի առաջին եռամսյակի համեմատ կրթության և գիտության ոլորտի ծախսերն ավելացել են 35.3%-ով կամ 4.5 մլրդ դրամով, որը հիմնականում պայմանավորված է տարրական, հիմնական և միջնակարգ ընդհանուր կրթության ծախսերի աճով:

Շուրջ 77.3 մլն դրամ հատկացվել է ոլորտում պետական կառավարում իրականացնող մարմինների պահպանմանը՝ ապահովելով առաջին եռամսյակի համար նախատեսված ծախսերի 70.9%-ով կատարում: 2006 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ այս ծախսերն ավելացել են 29.1%-ով կամ 17.4 մլն դրամով:

2007 թվականի պետական բյուջեի կրթության ոլորտի ծախսերի հիմնական մասը՝ 75.2%-ն ուղղվել է հանրակրթության համակարգին: Այն կազմել է շուրջ 13 մլրդ դրամ կամ նախատեսված հատկացումների 90.7%-ը: Շեղումը հիմնականում առաջացել է կրթական օբյեկտների հիմնանորոգման և շինարարության աշխատանքների ցածր կատարողականի արդյունքում, որոնց գծով ՀՀ պետական բյուջեից ծախսվել է համապատասխանաբար 1.6 մլրդ և 119.3 մլն դրամ՝ կազմելով ծրագրի 64 և 33.5 տոկոսը: Շուրջ 1.7 մլրդ դրամ ծախսվել է արտաքին աջակցությամբ իրականացվող ծրագրերի շրջանակներում: Մասնավորապես, Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Կրթության որակի և համապատասխանության ծրագրի շրջանակներում ծախսվել է 685.4 մլն դրամ՝ 168.3%-ով գերազանցելով ծրագրված հատկացումները: Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության կողմից Հայաստանի Հանրապետությանը ֆինանսական օգնության կարգով տրամադրված նվիրաբերության միջոցների հաշվին իրականացվող ՀՀ Գեղարքունիքի և Տավուշի մարզերի մարզային զարգացման ծրագրերը և Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի երրորդ ծրագիրը կատարվել են համապատասխանաբար 3.6 և 74.4 տոկոսով: Բացի այդ, շուրջ 747 մլն դրամի ծախսեր են իրականացվել Լինսի հիմնադրամի միջոցներով՝ կրթական հաստատությունների վերականգնման ծրագրի շրջանակներում: 2006 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ հանրակրթության հատկացումներն ավելացել են 37.9%-ով կամ 3.6 մլրդ դրամով, որը հիմնականում պայմանավորված է հանրակրթական դպրոցների պահպանման, արտաքին աջակցության և ներքին ռեսուրսների հաշվին կրթական օբյեկտների հիմնանորոգման ծախսերի ավելացմամբ:

Հատուկ ընդհանուր կրթության ծախսերն առաջին եռամսյակում կազմել են շուրջ 991.1 մլն դրամ՝ ապահովելով ծրագրային ցուցանիշի 94.9%-ով կատարում: Նախորդ տարվա առաջին եռամսյակի համեմատ հատուկ ընդհանուր կրթության ոլորտում պետական բյուջեի ծախսերն ավելացել են 20.3%-ով կամ ավելի քան 167.2 մլն դրամով:

Նախորդ տարվա առաջին եռամսյակի համեմատ զգալի աճ է արձանագրվել նաև արտադպրոցական դաստիարակության, նախնական և միջին մասնագիտական կրթության ծրագրերի գծով՝ համապատասխանաբար 37.6, 47.6 և 23.9 տոկոսով: Նշված ուղղություններով ծախսերը կազմել են 472.3 մլն դրամ, 277.3 մլն դրամ և 424.1 մլն դրամ՝ ապահովելով համապատասխանաբար 88.3%, 98.1% և 95.7% կատարողական:

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ պետական բյուջեից շուրջ 1.1 մլրդ դրամ տրամադրվել է բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության բնագավառին՝ ապահովելով եռամսյակային ծրագրի 92.5% կատարում: Շեղումը հիմնականում առաջացել է բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության ոլորտի հաստատությունների ծախսերի տնտեսման և կրթական օբյեկտների հիմնանորոգման նախատեսված աշխատանքները չկատարելու արդյունքում: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ այս ուղղությամբ կատարված ծախսերն ավելացել են 35.6%-ով:

Հաշվետու ժամանակահատվածում գիտության բնագավառի ծախսերը կազմել են ավելի քան 965.3 մլն դրամ՝ ապահովելով եռամսյակային ծրագրի 93.7% կատարողական: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ գիտության ոլորտի ծախսերն աճել են 23.5%-ով կամ 184 մլն դրամով:

2007 թվականի առաջին եռամսյակում ՀՀ պետական բյուջեից առողջապահության ոլորտին հատկացվել է ավելի քան 7.7 մլրդ դրամ՝ ապահովելով նախատեսվածի 87.4%-ը: Շեղումը պայմանավորված է հիմնականում կենտրոնացված կարգով դեղորայքի, նորագույն բժշկական սարքավորումների և գործիքների ձեռք բերման, ՀՀ-ում Տուբերկուլյոզի դեմ պայքարի Ազգային ծրագրի ուժեղացման ծրագրերի ցածր կատարողականով, ինչպես նաև հիվանդանոցների հիմնանորոգման աշխատանքների չկատարման հանգամանքով: 2006 թվականի առաջին եռամսյակի համեմատ առողջապահության ոլորտի ծախսերն աճել են 13.1%-ով կամ 893 մլն դրամով, որը հիմնականում պայմանավորված է առաջնային ու հիվանդանոցային բուժօգնության և հիգիենիկ-հակահամաճարակային ծառայությունների ծախսերի աճով:

Հաշվետու ժամանակահատվածում շուրջ 227.2 մլն դրամ տրամադրվել է առողջապահության բնագավառի պետական կառավարմանը՝ ապահովելով եռամսյակային ծրագրային ցուցանիշի 54.2%-ով կատարում: Շեղումը հիմնականում պայմանավորված է ՀՀ առողջապահության նախարարության արտաբյուջետային միջոցների հաշվին իրականացվող Տուբերկուլյոզի դեմ պայքարի Ազգային ծրագրի ուժեղացման ծրագրի ցածր կատարողականով, առանց որի ենթախմբի ծախսերի կատարողականը կազմել է 82.9%: 2006 թվականի նույն ժամանակաշրջանի համեմատ առողջապահության բնագավառի պետական կառավարման ծախսերն ավելացել են 54.6%-ով:

Առողջապահական ոլորտի ծախսերի 38.8%-ն ուղղվել է հիվանդանոցային բուժօգնության ծրագրերի ֆինանսավորմանը: Այն կազմել է շուրջ 3 մլրդ դրամ կամ նախատեսվածի 96.5%-ը: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ հիվանդանոցային բուժօգնության ծախսերն ավելացել են 9.7%-ով կամ 264.4 մլն դրամով:

Պետք է նշել, որ այս ենթախմբի ծրագրերի մեծ մասի գծով արձանագրվել է հատկացումների աճ:

Առողջապահական ծախսերի 38.6%-ն ուղղվել է բնակչության առողջության առաջնային պահպանմանը: Ամբուլատոր-պոլիկլինիկական բուժօգնության գծով հաշվետու ժամանակահատվածում տրամադրվել է շուրջ 3 մլրդ դրամ՝ ապահովելով եռամսյակային ծրագրի 98.9% կատարում: Նախորդ տարվա առաջին եռամսյակի համեմատ այս ծախսերն ավելացել են 23.9%-ով կամ 574.7 մլն դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է գորակոչային և նախագորակոչային տարիքի անձանց բժշկական օգնության և փորձաքննության գծով և բնակչության առողջության առաջնային պահպանման գծով պետական պատվերի ծախսերի աճով:

2007 թվականի առաջին եռամսյակում ՀՀ պետական բյուջեից ավելի քան 587.1 մլն դրամ տրամադրվել է հիգիենիկ-հակահամաճարակային ծառայությունների ֆինանսավորմանը՝ 20.7%-ով գերազանցելով ծրագիրը: Վերջինս պայմանավորված է Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Թռչնագրիային հակազդելու ծրագրի կատարողականով, որը կազմել է 291.9%: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ այս ենթախմբի ծախսերն ավելացել են 45.6%-ով՝ պայմանավորված Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Թռչնագրիային հակազդելու վարկային ծրագրի և վերջինիս շրջանակներում ճապոնական դրամաշնորհային ծրագրի իրականացմամբ և հիգիենիկ-հակահամաճարակային ծառայության գծով պետական պատվերի ծախսերի աճով:

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորվել են նաև մի շարք այլ բուժօգնության ծրագրեր 723.9 մլն դրամի չափով՝ ապահովելով եռամսյակային ծրագրի 46.5%-ով կատարում: Թերակատարման հիմնական պատճառ է հանդիսացել կենտրոնացված կարգով նորագույն բժշկական սարքավորումների, գործիքների և դեղորայքի ձեռք բերման ցածր կատարողականը: Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվել են երկու դրամաշնորհային և երկու վարկային ծրագրեր, որոնք նույնպես թերակատարվել են: Մասնավորապես, Առողջապահական համակարգի արդիականացման ծրագրի շրջանակներում ծախսվել է 362.5 մլն դրամ՝ նախատեսված 412.3 մլն դրամի փոխարեն, Առողջապահական համակարգի արդիականացման ծրագրում ճապոնական դրամաշնորհային ծրագրով՝ 7.7 մլն դրամ՝ նախատեսված 9.3 մլն դրամի փոխարեն: Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի երրորդ ծրագրի շրջանակներում «Սոցիալական և տնտեսական փոքրամասշտաբ ենթակառուցվածքի վերականգնում առողջապահության ոլորտում» ենթածրագրով նախատեսված 14.8 մլն դրամի դիմաց



ծախսեր չեն իրականացվել: Նախորդ տարվա առաջին եռամսյակի համեմատ բուժօգնության այլ ծառայությունների ծախսերը նվազել են 23.1%-ով կամ 217.2 մլն դրամով:

Հաշվետու ժամանակահատվածում առողջապահական այլ ծառայություններին և ծրագրերին տրամադրվել է 211.2 դրամ՝ ապահովելով եռամսյակային ծրագրի 81.1% կատարում: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ այս ենթախմբի ծախսերն ավելացել են 3.4%-ով:

2007 թվականի առաջին եռամսյակում սոցիալական ապահովագրության և սոցիալական ապահովության բնագավառի ծախսերը կազմել են ավելի քան 12.8 մլրդ դրամ՝ 81.3%-ով ապահովելով եռամսյակային ծրագրի կատարումը: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ոլորտի ծախսերն աճել են 14%-ով կամ 1.6 մլրդ դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է բնակարանների գնման վկայագրերի տրամադրման միջոցով բնակարանային ապահովման ծրագրի ֆինանսավորմամբ (որի գծով նախորդ տարվա նույն ժամանակահատվածում ծախսեր չեն իրականացվել), կենսաթոշակային ապահովության և նպաստների ծախսերի աճով:

Հաշվետու ժամանակահատվածում պետական բյուջեից 236.0 մլն դրամ է հատկացվել ոլորտում պետական կառավարում իրականացնող մարմինների պահպանմանը՝ ապահովելով ծրագրի 82.0%-ով կատարում: 2006 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ այս ծախսերն ավելացել են 26.5%-ով:

Սոցիալական ծախսերի գերակշռող մասը բաժին է ընկնում նպաստներին ու կենսաթոշակային ապահովմանը: Մասնավորապես, նպաստների գծով պետական բյուջեի ծախսը կազմել է շուրջ 6 մլրդ դրամ կամ ծրագրի 91.9%-ը, որը պայմանավորված է տնտեսումներով: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նպաստների ծախսերն ավելացել են 2.1%-ով կամ շուրջ 125.3 մլն դրամով:

Կենսաթոշակների գծով ծախսերը նույն ժամանակահատվածում կազմել են ավելի քան 4.4 մլրդ դրամ կամ նախատեսվածի 96.7%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է սպայական անձնակազմի և նրանց ընտանիքների անդամների կենսաթոշակային ապահովության ծախսերի տնտեսմամբ, ինչպես նաև ֆինանսավորված գումարներն ամբողջությամբ չծախսելու հանգամանքով: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ կենսաթոշակային հատկացումների աճը կազմել է 12.6% կամ 493.6 մլն դրամ:

Սոցիալական ապահովության միջոցառումների գծով նախատեսված հատկացումներն ուղղվել են թվով 25 սոցիալական ծրագրերի ֆինանսավորմանը, որոնցում մեծ տեսակարար կշիռ ունեն տարեցների և երեխաների տուն-ինտերնատներին պետական աջակցության և հաշմանդամներին անվճար պրոթեզաօրթոպեդիկ պարագաներով ապահովման ու դրանց վերանորոգման ծախսերը: Հաշվետու ժամանակահատվածում

սոցիալական ապահովության միջոցառումների գծով ծախսերը կազմել են ավելի քան 673.6 մլն դրամ կամ եռամսյակի ծրագրի 61.2%-ը: Շեղումը հիմնականում առաջացել է տարեցների և երեխաների տուն-ինտերնատներին պետական աջակցության, հաշմանդամներին անվճար պրոթեզաօրթոպեդիկ պարագաներով ապահովման ու դրանց վերանորոգման, «Զբաղվածության ծառայություններ» ծրագրի շրջանակներում իրականացվող վարձատրվող հասարակական աշխատանքների ծախսերի գծով: Առաջին երեք ծրագրերի ծախսերի ցածր կատարողականը հիմնականում պայմանավորված է այն հանգամանքով, որ մարտ ամսին մատուցված ծառայությունների դիմաց վճարումը կատարվել է ապրիլ ամսին, իսկ վարձատրվող հասարակական աշխատանքների թերակատարումը պայմանավորված է համապատասխան ծրագրերի ուշ ընդունմամբ: Նախորդ տարվա համեմատ սոցիալական ապահովության միջոցառումների ծախսերն աճել են 30.1%-ով կամ 156 մլն դրամով:

Բյուջեով նախատեսված այլ սոցիալական ծրագրերի ֆինանսավորումը կազմել է շուրջ 1.6 մլրդ դրամ՝ ապահովելով եռամսյակային ծրագրի 46.6%-ը: Ցածր կատարողականը հիմնականում պայմանավորված է նրանով, որ գոհված (մահացած) և առաջին, երկրորդ և երրորդ կարգի հաշմանդամ զինծառայողների անօթևան ընտանիքներին բնակարանով ապահովման և բնակարանային պայմանների բարելավման համար իրականացված ծախսերի դիմաց վճարումն իրականացվել է ապրիլ ամսին:

Մշակույթի, տեղեկատվության, սպորտի և կրոնի բնագավառի ծախսերը 2007 թվականի առաջին եռամսյակում կազմել են շուրջ 2.6 մլրդ՝ ապահովելով ծրագրով նախատեսվածի 76.5%-ը: Շեղումն առաջացել է հիմնականում սպորտի, հուշարձանների վերականգնման, հեռուստահաղորդումների և արվեստի ծրագրերի գծով: 2006 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ մշակույթի, տեղեկատվության, սպորտի և կրոնի բնագավառի ծախսերն աճել են 3.2%-ով կամ շուրջ 81.2 մլն դրամով:

Բնագավառի պետական կառավարման ծախսերն առաջին եռամսյակում կազմել են ավելի քան 103.5 մլն դրամ՝ ապահովելով եռամսյակային ծրագրի 81.5% կատարողական: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նշված ծախսերն ավելացել են 14.3%-ով:

Հաշվետու ժամանակահատվածում գրադարանների, թանգարանների և ցուցահանդեսների, մշակույթի տների, ակումբների ու կենտրոնների և այլ մշակութային հիմնարկների պահպանմանը հատկացվել է համապատասխանաբար 154.1, 208.5, 152.8 և 101.4 մլն դրամ, որոնք, ընդհանուր առմամբ, ապահովել են եռամսյակի համար նախատեսված հատկացումների 83.9%-ը: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել է գրադարանների, մշակույթի տների, ակումբների ու կենտրոնների և

նվազել՝ թանգարանների, ցուցահանդեսների և այլ մշակութային հիմնարկների պետական աջակցությունը:

Արվեստի ոլորտի ֆինանսավորմանը պետական բյուջեից տրամադրվել է շուրջ 646.0 մլն դրամ՝ նախատեսված 737.4 մլն դրամի դիմաց: Շեղումը պայմանավորված է իրականացված միջոցառումների ցածր կատարողականով: 2006 թվականի առաջին եռամսյակի համեմատ այս ուղղությամբ կատարված ծախսերն ավելացել են 60.8%-ով կամ շուրջ 244.2 մլն դրամով՝ հիմնականում պայմանավորված է մշակութային միջոցառումներին պետական աջակցության ծավալների ավելացմամբ:

Անցած ժամանակահատվածում ավելի քան 87.9 մլն դրամ են կազմել կինեմատոգրաֆիայի բնագավառի ծախսերը՝ ապահովելով եռամսյակի համար նախատեսված ծրագրային ցուցանիշի 81.6% կատարում: Արդյունքում նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածի համեմատ նշված ծախսերն աճել են 20.1%-ով:

2007 թվականի առաջին եռամսյակում հուշարձանների և մշակութային արժեքների վերականգնման և պահպանման բնագավառին տրամադրվել է շուրջ 5.7 մլն դրամ կամ ծրագրի 4.0%-ը՝ պայմանավորված փաստացի աշխատանքների ցածր կատարողականով:

Սպորտի ոլորտում կատարվել են շուրջ 207.6 մլն դրամի ծախսեր, որը կազմել է եռամսյակային ծրագրի 48.2%-ը: Շեղումն առաջացել է մարզաձևերի զարգացման նպատակով ՀՀ մարզական ֆեդերացիաներին պետական աջակցության ցածր կատարողականի և ֆիզիկական կուլտուրայի ու սպորտի զարգացման 2007-2009թթ. պետական ծրագրի իրականացման նպատակով «Սպորտային միջոցառումների կազմակերպման կենտրոն» ՊՈԱԿ-ին պետական աջակցության ծրագրի չիրականացման արդյունքում, ինչը հանգեցրել է նաև նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ սպորտի բնագավառի ծախսերի 46.5%-ով կամ 180.5 մլն դրամով նվազմանը:

Հաշվետու ժամանակահատվածում հեռուստառադիոհաղորդումների գծով պետական բյուջեի ծախսերը կազմել են ավելի քան 707.4 մլն դրամ՝ 83.4%-ով ապահովելով ծրագրային հատկացումների ծավալը: 2007 թվականի առաջին եռամսյակում 95.9 մլն դրամ (83%) են կազմել հրատարակչությունների և խմբագրությունների պահպանման, 11.2 մլն դրամ (100%)՝ տեղեկատվության ձեռք բերման, 61.3 մլն դրամ (99.9%)՝ երիտասարդական ծրագրերի և 39.2 մլն դրամ (66.2%) քաղաքական կուսակցությունների և հասարակական կազմակերպությունների գծով կատարված ծախսերը:

2007 թվականի առաջին եռամսյակում բնակարանային կոմունալ տնտեսության ծրագրերին ՀՀ պետական բյուջեից տրամադրվել է ավելի քան 2.8 մլրդ դրամ՝ կազմելով եռամսյակային ծրագրի 47.4%-ը: Ծրագրից շեղումը հիմնականում պայմանավորված է Երևանի համաքաղաքային նշանակության ծրագրերի և արտաքին աջակցությամբ

իրականացվող որոշ վարկային և դրամաշնորհային ծրագրերի ցածր կատարողականով: 2006 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ բնակարանային կոմունալ տնտեսության բնագավառի ծախսերը նվազել են 15.5 %-ով կամ 518.2 մլն դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է ջրամատակարարման և կոյուղու համակարգերի շահագործման և բնակարանային կոմունալ տնտեսության այլ ծրագրերի ֆինանսավորման նվազմամբ:

Բնակարանային տնտեսության և բնակարանային շինարարության ծրագրերի ֆինանսավորմանը նախատեսված 2.2 մլրդ դրամի փոխարեն տրամադրվել է 883.1 մլն դրամ: Շեղումը հիմնականում պայմանավորված է Երևանի համաքաղաքային նշանակության ծախսերի, Հայաստանի Հանրապետության համայնքային բյուջեներին սուբվենցիաների տրամադրման, անավարտ շինարարության բնակաշինարարական կոոպերատիվների փայատերերի ներդրված միջոցների դիմաց պետական օգնության և Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Քաղաքային ջեռուցման ծրագրերի ցածր կատարողականով: Մասնավորապես, Երևանի համաքաղաքային նշանակության ծախսերին հատկացվել է 590.6 մլն դրամ՝ նախատեսված 1.7 մլրդ դրամի դիմաց, իսկ ՀՀ համայնքների բյուջեներին նախատեսված 126 մլն դրամի սուբվենցիաները չեն տրամադրվել: Անավարտ շինարարության բնակաշինարարական կոոպերատիվների փայատերերի ներդրված միջոցների դիմաց պետական օգնության ծրագրի շրջանակներում ծախսվել է ավելի քան 45.0 մլն դրամ՝ նախատեսված 125.0 մլն դրամի փոխարեն, իսկ Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Քաղաքային ջեռուցման ծրագրի ծախսերը կազմել են 247.4 մլն դրամ՝ նախատեսված 295.7 մլն դրամի փոխարեն: Չնայած նրան, որ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ 2007 թվականի առաջին եռամսյակում բնակարանային տնտեսության և բնակարանային շինարարության ոլորտում «Անավարտ շինարարության բնակաշինարարական կոոպերատիվների փայատերերի ներդրված միջոցների դիմաց պետական օգնության» ծրագրի ֆինանսավորումը նվազել է, իսկ «Բնակարանային ապահովում բնակարանների գնման վկայագրերի տրամադրման միջոցով», «Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Համատիրությունների վրա հիմնված քաղաքային ջրամատակարարման կառավարման ճապոնական դրամաշնորհային», «Բնակարանային շինարարություն», «Բնակֆոնդի հիմնանորոգում», «Գյուղական բնակավայրերում անօթևան մնացած ընտանիքների համար բնակարանային շինարարություն» ծրագրերը չեն իրականացվել, այդուհանդերձ նշված ոլորտում արձանագրվել է աճ (մոտ 106.6 մլն դրամով կամ 13.7%-ով), որը պայմանավորված է Երևանի համաքաղաքային նշանակության և Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Քաղաքային ջեռուցման ծրագրերի ֆինանսավորման ավելացմամբ:

Հաշվետու ժամանակահատվածում մոտ 3.9 մլն դրամ հատկացվել է ռադիոակտիվ թափոնների վնասագործման միջոցառումների ֆինանսավորման համար, որի ծրագիրը կատարվել է 92.8%-ով, իսկ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ծախսերը պակաս են 0.8 մլն դրամով կամ 17.2%-ով:

2007 թվականի առաջին եռամսյակում ջրամատակարարման և կոյուղու համակարգերի շահագործման աշխատանքների ֆինանսավորմանն է ուղղվել ավելի քան 1.5 մլրդ դրամ՝ կազմելով եռամսյակային ծրագրի 63.1%-ը, որը հիմնականում պայմանավորված է արտաքին աջակցությամբ իրականացվող վարկային ծրագրերի ցածր կատարողականով: Մասնավորապես, Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Երևանի ջրամատակարարման և ջրահեռացման ծրագրի շրջանակներում ծախսվել է ավելի քան 30.0 մլն դրամ՝ նախատեսված 499.5 մլն դրամի փոխարեն, ՀՀ համայնքային բյուջեներին տրամադրվել են 4 մլն դրամ սուբվենցիաներ՝ նախատեսված 255.0 մլն դրամի դիմաց: Ցածր կատարողական է արձանագրվել նաև Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող ՀՀ Շիրակի մարզի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վերականգնման ծրագրի գծով, որի շրջանակներում ծախսվել է 70.3 մլն դրամ՝ նախատեսված 190.6 մլն դրամի դիմաց, իսկ նույն ծրագրին աջակցելու նպատակով նախատեսված 105 մլն դրամ դրամաշնորհից հատկացումներ չեն կատարվել: Վճարումներ չեն կատարվել նաև Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող ՀՀ Լոռու մարզի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վերականգնման դրամաշնորհային ծրագրի գծով (նախատեսված էր 82.5 մլն դրամ), իսկ նույն ծրագրի շրջանակներում տրամադրված վարկային միջոցներից հատկացվել է 62.7 մլն դրամ՝ նախատեսված 128.9 մլն դրամի դիմաց:

Նշենք, որ Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող ՀՀ Արմավիրի մարզում կոյուղու համակարգերի պարզարանային կայանի կառուցման ծրագրի շրջանակներում կատարած ծախսերը 164.9%-ով գերազանցել են նախատեսվածը, իսկ «Հայջրնուկոյուղի» ՓԲԸ-ին նախատեսված սուբսիդիան տրամադրվել է ամբողջությամբ՝ կազմելով 345.3 մլն դրամ:

2007 թվականի առաջին եռամսյակում ջրամատակարարման և կոյուղու համակարգերի շահագործման ծախսերը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազել են 482.3 մլն դրամով կամ 25%-ով, ինչը հիմնականում պայմանավորված է Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Համայնքային ջրամատակարարման և ջրահեռացման ծրագրի ծախսերի նվազմամբ (460.4 մլն դրամով կամ 51%-ով) և «Հայջրնուկոյուղի» ՓԲԸ-ի սուբսիդավորման կրճատմամբ (154.7 մլն

դրամով կամ 30.9%-ով), ինչպես նաև «Երևան Ջրմուղ-կոյուղի ՓԲԸ-ին պետական բյուջեով սուբսիդավորում չհատկացնելու հանգամանքով:

Բնակարանային կոմունալ տնտեսության այլ ծրագրերի գծով 2007 թվականի առաջին եռամսյակում կատարված ծախսերը կազմել են 489.8 մլն դրամ կամ նախատեսվածի 34.3%-ը: Այս ենթախմբում ներառված են կադաստրի և քարտեզագրման բնագավառի ծրագրերը, այդ թվում՝ Երևանի համաքաղաքային նշանակության ծրագրերը, որոնք նախատեսված ծավալով չեն իրականացվել: Մասնավորապես, բնագավառում նախատեսված 9 ծրագրեր՝ 92.3 մլն դրամ գումարով, չեն իրականացվել: Բացի այդ, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի ստորաբաժանումների կողմից մատուցվող ծառայություններից ստացվող եկամուտների հաշվին կոմիտեի համակարգի գծով ծախսերը կազմել են 272.6 մլն դրամ կամ նախատեսվածի 56.3%-ը, իսկ Երևանի համաքաղաքային նշանակության ծախսերը՝ 189.9 մլն դրամ կամ նախատեսվածի 23.5%-ը: Վերոնշյալի արդյունքում նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ բնակարանային կոմունալ տնտեսության այլ ծրագրերի ծախսերը նվազել են 141.6 մլն դրամով կամ 22.4%-ով:

Վառելիքային և էներգետիկ բնագավառի ծախսերը 2007 թվականի առաջին եռամսյակում կազմել են ավելի քան 817.3 մլն դրամ՝ ապահովելով եռամսյակային ծրագրի 106.1% կատարողական: Ծրագրի գերազանցումը հիմնականում պայմանավորված է Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող էլեկտրաէներգիայի տեղափոխման սեկտորի վերակառուցման վարկային ծրագրի բարձր կատարողականով: 2006 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ ոլորտի ծախսերը մնացել են գրեթե նույն մակարդակին:

Էներգետիկայի բնագավառում պետական կառավարում իրականացնող մարմինների պահպանմանը պետական բյուջեից տրամադրվել է ավելի քան 112.3 մլն դրամ՝ ապահովելով 78.3% կատարողական: 2006 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ նշված ծախսերն աճել են 27.1%-ով կամ շուրջ 24.0 մլն դրամով:

Էլեկտրաէներգետիկայի բնագավառի ծախսերը հաշվետու ժամանակահատվածում կազմել են ավելի քան 704.9 մլն դրամ՝ ապահովելով 114.4% կատարողական: Վերջինս հիմնականում պայմանավորված է Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող էլեկտրաէներգիայի տեղափոխման սեկտորի վերակառուցման ծրագրի ծախսերով, որոնք կազմել են 422.4 մլն դրամ կամ նախատեսվածից 130.8%-ով ավելի: Միևնույն ժամանակ, ցածր՝ 48.3% կատարողական է արձանագրվել Ճապոնիայի կառավարության աջակցությամբ իրականացվող էլեկտրահաղորդման գծերի և բաշխիչ ցանցերի վերականգման ծրագրի գծով, իսկ

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Վերականգնվող էներգետիկայի ծրագրի շրջանակներում ծախսեր չեն իրականացվել: Նշենք նաև, որ Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող էլեկտրահաղորդման գծերի և բաշխիչ ցանցերի վերականգնման ծրագրի շրջանակներում հաշվետու ժամանակահատվածում կատարվել են 183.6 մլն դրամի վճարումներ: 2006 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ էլեկտրաէներգետիկայի ոլորտի ծախսերն աճել են 1.4%-ով կամ 9.6 մլն դրամով:

Հաշվետու ժամանակահատվածում ատոմային էներգետիկայի բնագավառում նախատեսված «Հայկական ԱԷԿ» ՓԲԸ-ում աշխատած միջուկային վառելիքի չոր եղանակով պահպանման պահեստարանի կառուցման ուղղությամբ աշխատանքներ չեն իրականացվել, որին առաջին եռամսյակի պետական բյուջեով հատկացվել էր 10 մլն դրամ:

2007 թվականի առաջին եռամսյակում գյուղատնտեսության, անտառային և ջրային տնտեսության և ձկնաբուծության բնագավառներին ուղղվել է ՀՀ պետական բյուջեի ծախսերի 3.8%-ը կամ շուրջ 3.8 մլրդ դրամ՝ ապահովելով եռամսյակային և տարեկան ծրագրային ցուցանիշների կատարումը համապատասխանաբար 77.9 և 15.1 տոկոսով: Ծրագրից շեղումը հիմնականում պայմանավորված է արտաքին աղբյուրներից ֆինանսավորվող որոշ վարկային և դրամաշնորհային ծրագրերի, ինչպես նաև ոռոգման համակարգի սուբսիդավորման և բույսերի պաշտպանության միջոցառումների ցածր կատարողականով: 2006 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ գյուղատնտեսության, անտառային և ջրային տնտեսության խմբի ծախսերն ընդհանուր առմամբ աճել են 36.3%-ով, որը հիմնականում պայմանավորված է տոհմաբուծության, սերմնաբուծության և այլ ծրագրերի ենթախմբի, ինչպես նաև ձկնաբուծության և ջրային տնտեսության ենթախմբի ֆինանսավորման աճով, այդ թվում՝ նաև նոր ծրագրերի ֆինանսավորմամբ:

Հաշվետու ժամանակահատվածում 109.0 մլն դրամ են կազմել գյուղատնտեսության և ջրային տնտեսության ոլորտներում պետական կառավարում իրականացնող մարմինների պահպանման ծախսերը՝ կազմելով ծրագրվածի 79.2%-ը:

Հողերի բարելավման աշխատանքների գծով ծախսերը հաշվետու ժամանակահատվածում կազմել են 268.7 մլրդ դրամ, ինչը 14.2%-ով զիջել է ծրագրային ցուցանիշը՝ պայմանավորված Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Ոռոգման համակարգի զարգացման վարկային ծրագրի ցածր կատարողականով: Նշված ծրագրի շրջանակներում նախատեսված շուրջ 292.0 մլն դրամի դիմաց փաստացի ծախսերը կազմել են 250.3 մլն դրամ կամ 85.7%:

Ձկնաբուծության և ջրային տնտեսության բնագավառում անցած եռամսյակում պետական բյուջեից ծախսվել է շուրջ 868.3 մլն դրամ՝ 1.1%-ով գերազանցելով ծրագիրը:

Մասնավորապես, Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող պատվարների անվտանգության առաջին և երկրորդ ծրագրերի շրջանակներում ծախսվել է 318.3 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի կատարումը 103.4%-ով: Իսկ «Որոտան-Արփա-Սևան թունելների շահագործման վարչություն» պետական հիմնարկի պահպանման, «Որոտան-Արփա-Սևան» ջրային համակարգի շահագործման, տեխնիկական վիճակի բարելավման և նորոգման ծրագրով նախատեսված ծախսերը կատարվել են 99.8%-ով: 2006 թվականի առաջին եռամսյակի համեմատ ձկնաբուծության և ջրային տնտեսության ոլորտի ծախսերն ավելացել 3.1 անգամ կամ 589.7 մլն դրամով:

Բույսերի պաշտպանության ծրագրերի գծով պետական բյուջեի ծախսերը կատարվել են 58.2%-ով՝ կազմելով 95.6 մլն դրամ: Ենթախմբի ցածր կատարողականը պայմանավորված է բույսերի պաշտպանության միջոցառումների նախատեսված ծավալների թերակատարմամբ:

Անասնաբուծության և հսկահամաճարակային միջոցառումների գծով պետական բյուջեի ծախսերը կատարվել են 63.6%-ով՝ կազմելով շուրջ 413.4 մլն դրամ: Այս միջոցառումների գծով նախատեսված հատկացումներն ուղղվել են թվով 4 ծրագրերի ֆինանսավորմանը, որոնցում մեծ կշիռ ունեն պատվաստուկների և հսկահամաճարակային միջոցառումների համար անհրաժեշտ այլ պարագաների ձեռք բերման նպատակով կատարված ծախսերը: Վերջիններս կազմել են 318.9 մլն դրամ՝ 100%-ով ապահովելով ծրագրի կատարումը: Այս ենթախմբում նախատեսված 4 ծրագրեր հաշվետու ժամանակահատվածում չեն իրականացվել, այդ թվում՝ Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Թռչնագրիային հակազդելու ճապոնական դրամաշնորհային ծրագիրը, իսկ Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Թռչնագրիային հակազդելու վարկային ծրագիրը կատարվել է 53.3%-ով՝ կազմելով 59.2 մլն դրամ: 2006 թվականի նույն ժամանակահատվածի նկատմամբ անասնաբուծության և հսկահամաճարակային միջոցառումների գծով պետական բյուջեի ծախսերն ավելացել են 26.2%-ով:

Անտառային տնտեսության ծախսերը կազմել են շուրջ 213.0 մլն դրամ կամ նախատեսվածի 98.6%-ը: 2006 թվականի նույն ժամանակահատվածի նկատմամբ նշված ծախսերն ավելացել են 35.0%-ով:

Խմբի ծախսերի 47.9%-ը կամ ավելի քան 1.8 մլրդ դրամը կազմել են տոհմաբուծության, սերմնաբուծության և այլ ծրագրերի գծով ծախսերը, որոնք ապահովել են եռամսյակային ծրագրի 72.2%-ով կատարում: Ցածր կատարողականը հիմնականում Ոռոգման համակարգերի սուբսիդավորման ցածր կատարողականի արդյունք է: Նշված ուղղությամբ նախատեսված ավելի քան 929.4 մլն դրամի դիմաց տրամադրվել է 317.0 մլն



դրամ՝ ապահովելով ծրագրի կատարումը 34.1%-ով: Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Գյուղական ձեռնարկությունների և փոքրածավալ առևտրային գյուղատնտեսության զարգացման ծրագրի շրջանակներում ծախսվել է 402.5 մլն դրամ՝ նախատեսված 345.3 մլն դրամի դիմաց, իսկ նույն վարկային ծրագրին աջակցելու նպատակով տրամադրված ճապոնական դրամաշնորհի հաշվին կատարված ծախսերը կազմել են 11.6 մլն դրամ կամ նախատեսվածի 23.1%-ը: Նշված ենթախմբի շրջանակում նախատեսված 5 ծրագրեր չեն իրականացվել, այդ թվում՝ սուբսիդավորման փորձնական ծրագիրը 117.5 մլն դրամի չափով, Ճապոնական կառավարության աջակցությամբ իրականացվող «Պարենային արտադրության աճ» ծրագրի շրջանակներում հակահեղեղային և անտառվերականգնման միջոցառումները՝ 23.1 մլն դրամի չափով: Ցածր կատարողական է արձանագրվել նաև Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության կողմից Հայաստանի Հանրապետությանը ֆինանսական օգնության կարգով տրամադրված նվիրաբերության միջոցների հաշվին ՀՀ Գեղարքունիքի և Տավուշի մարզերում իրականացվող մարզային զարգացման ծրագրերի գծով, որոնց ծախսերը կազմել են 13.8 մլն դրամ կամ նախատեսվածի 22.3%-ը:

Ծրագրվածից 11.6%-ով ավելի՝ 656.3 մլն դրամի ծախսեր են կատարվել ԱՄՆ կառավարության աջակցությամբ իրականացվող «Հազարամյակի մարտահրավեր» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում: Հիմնականում նշված ծրագիրը սկսելու, ինչպես նաև արտաքին աջակցությամբ իրականացվող մի շարք ծրագրերի ֆինանսավորման աճի արդյունքում 2006 թվականի առաջին եռամսյակի համեմատ տոհմաբուծության, սերմնաբուծության և այլ ծրագրերի գծով ծախսերն աճել են 93.2%-ով:

2007 թվականի առաջին եռամսյակում արդյունաբերության, հանրային հանածոների, շինարարության և բնապահպանության բնագավառներում պետական բյուջեի ծախսերը կազմել են ավելի քան 1.2 մլրդ դրամ կամ ծրագրով նախատեսվածի 71.1%-ը: Ընդունը հիմնականում պայմանավորված է նախագծահետախուզական աշխատանքների և ԱՄՆ կառավարության աջակցությամբ իրականացվող «Հազարամյակի մարտահրավեր» դրամաշնորհային ծրագրի ցածր կատարողականով: Նախորդ տարվա առաջին եռամսյակի համեմատ խմբի ծախսերն ավելացել են 33.9%-ով, որը հիմնականում ապահովվել է Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Բնական պաշարների կառավարման և չքավորության նվազեցման ծրագրի, «Հազարամյակի մարտահրավեր» դրամաշնորհային ծրագրի և պետական կառավարման մարմինների պահպանման ծախսերի աճի հաշվին:

Հաշվետու ժամանակահատվածում 354.9 մլն դրամ ուղղվել է ոլորտի պետական կառավարման մարմինների պահպանմանը՝ ապահովելով եռամսյակային ծրագրի 76.1%

կատարողական: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նշված մարմինների ծախսերն աճել են 7.6%-ով կամ ավելի քան 25.1 մլն դրամով:

Լեռնահանքային արդյունաբերության և երկրաբանահետախուզական աշխատանքների շրջանակներում 816.8 հազ. դրամ տրամադրվել է «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ին պետական աջակցության նպատակով՝ ամբողջությամբ ապահովելով ծրագրի կատարումը:

Նախագծահետախուզական աշխատանքներին ՀՀ պետական բյուջեից տրամադրվել է ավելի քան 253.8 մլն դրամ՝ նախատեսված 454.3 մլն դրամի դիմաց, ինչը հիմնականում պայմանավորված է Երևանի համաքաղաքային նշանակության ծախսերի և նախագծային աշխատանքների ցածր կատարողականով, որը կազմել է համապատասխանաբար 6% և 87.3%: 2006 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ նախագծահետախուզական աշխատանքների ծախսերն աճել են 48.7%-ով կամ մոտ 83.1 մլն դրամով:

Բնության հատուկ պահպանվող տարածքների ֆինանսավորմանը հաշվետու ժամանակահատվածում տրամադրվել է 69.1 մլն դրամ՝ ապահովելով ծրագրային ցուցանիշի 97.6% կատարում: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ բնության հատուկ պահպանվող տարածքների ծախսերը նվազել են 6.2%-ով կամ մոտ 4.6 մլն դրամով:

Բնապահպանական այլ միջոցառումների շրջանակներում պետական բյուջեից ծախսվել է 304.4 մլն դրամ՝ ապահովելով 102.4% կատարողական: Բարձր ցուցանիշը պայմանավորված է Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Բնական պաշարների կառավարման և չքավորության նվազեցման վարկային ծրագրի ծախսերով, որոնք կազմել են 272.6 մլն դրամ՝ 27.1%-ով գերազանցելով ծրագիրը: Նշված ծրագրի շրջանակներում տրամադրված վարկային և դրամաշնորհային միջոցների աճով պայմանավորված՝ բնապահպանական այլ միջոցառումների ծախսերը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ արձանագրել են ավելի քան եռակի աճ:

Այլ ծրագրերի ֆինանսավորման համար պետական բյուջեից տրամադրվել է շուրջ 242.0 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 55.8%-ը, ինչը պայմանավորված է ԱՄՆ կառավարության աջակցությամբ իրականացվող «Հազարամյակի մարտահրավեր» դրամաշնորհային ծրագրի և Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Ձեռնարկությունների ինկուբատորի վարկային ծրագրի ցածր կատարողականով: Նշված ծրագրերի շրջանակներում կատարվել են համապատասխանաբար 84.8 մլն և 126.1 մլն դրամի ծախսեր՝ կազմելով ծրագրվածի 35.1 և 52.1 տոկոսը:

Տվյալ խմբում արտացոլված՝ նախորդ բյուջետային տարիներին տրամադրված վարկերի վերադարձից անցած ժամանակահատվածում պետական բյուջե է մուտքագրվել

98.5 մլն դրամ, այդ թվում՝ «Գրեյթ Վելի» ՀՉ ՍՊԸ-ից՝ 42.5 մլն դրամ, «Աշտարակյան գինիներ» ՓԲԸ-ից՝ 43.4 մլն դրամ, «Հայագրոբանկ» ԲԲԸ-ից՝ 10.8 մլն դրամ:

2007 թվականի առաջին եռամսյակում տրանսպորտի, ճանապարհային տնտեսության և կապի բնագավառներում ՀՀ պետական բյուջեի ծախսերը կազմել են շուրջ 7.7 մլրդ դրամ՝ ապահովելով եռամսյակային ծրագրի կատարումը 70.6%-ով: Շեղումը հիմնականում պայմանավորված է ճանապարհային տնտեսության բնագավառի ծրագրերի ցածր կատարողականով: Սակայն հարկ է նշել, որ 2006 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ ճանապարհային տնտեսության ծախսերն ավելի քան կրկնակի չափով ավելացել են, ինչի արդյունքում տրանսպորտի, ճանապարհային տնտեսության և կապի բնագավառի ծախսերն աճել են 79.5%-ով կամ ավելի քան 3.4 մլրդ դրամով:

Տրանսպորտի և կապի բնագավառներում պետական կառավարում իրականացնող մարմինների պահպանման ուղղությամբ ծախսվել է ավելի քան 83.0 մլն դրամ՝ կազմելով ծրագրի 32.7%-ը: Կատարողականի ցածր ցուցանիշը պայմանավորված է ծախսերի տնտեսմամբ:

Ավտոմոբիլային և քաղաքային էլեկտրական տրանսպորտի բնագավառի ծախսերը կազմել են շուրջ 296.4 մլն դրամ՝ ամբողջությամբ ապահովելով ծրագրի կատարումը: Մասնավորապես 155 մլն դրամ հատկացվել է Երևանի մետրոպոլիտենի սուբսիդավորմանը, 69 մլն դրամ՝ Երևանի էլեկտրատրանսպորտի սուբսիդավորմանը, 72.4 մլն դրամ՝ «Կ. Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի կողմից 01.10.99թ.-01.01.02թ. ժամանակահատվածում անվճար և զեղչ սակագներով ծառայություններ մատուցելու հետևանքով չստացած եկամուտների (առաջացած վնասների) փոխհատուցմանը: 2006 թվականի առաջին եռամսյակի համեմատ ավտոմոբիլային և քաղաքային էլեկտրական տրանսպորտի ծախսերը նվազել են 65.5%-ով կամ 563.5 մլն դրամով: Ծախսերի անկումը հիմնականում պայմանավորված է այս ոլորտում 2006 թվականին Երևանի համաքաղաքային նշանակության ծախսերի իրականացմամբ, որոնց գծով ՀՀ 2007 թվականի պետական բյուջեով միջոցներ չեն նախատեսվել:

Տրանսպորտի, ճանապարհային տնտեսության և կապի ծախսերի գերակշիռ մասը ճանապարհային տնտեսությանն ուղղված գումարներն են, որոնք ընթացիկ տարվա առաջին եռամսյակում կազմել են ավելի քան 7.2 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրային հատկացումների 70.5%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է պետական նշանակության ավտոճանապարհների հիմնանորոգման և Երևանի համաքաղաքային նշանակության ծրագրերի ցածր կատարողականով: Նշված ծրագրերի շրջանակներում տրամադրվել է համապատասխանաբար 2.8 մլրդ և 656.4 մլն դրամ՝ կազմելով ծրագրի 64.6

և 40.8 տոկոսը: Ցածր կատարողական է գրանցվել նաև ՀՀ համայնքների բյուջեներին հատկացվող սուբվենցիաների գծով. դրանք կազմել են 82.0 մլն դրամ կամ նախատեսվածի 17.8%-ը: Բացի այդ, շեղումներ են արձանագրվել նաև պետական նշանակության ավտոճանապարհների պահպանման և շահագործման, տրանսպորտային օբյեկտների հիմնանորոգման, տեղական (մարզային) նշանակության ավտոճանապարհների ձմեռային պահպանման, ընթացիկ պահպանման և շահագործման ծրագրերի, ինչպես նաև Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության կողմից Հայաստանի Հանրապետությանը ֆինանսական օգնության կարգով տրամադրված նվիրաբերության միջոցների հաշվին իրականացվող ՀՀ Գեղարքունիքի և Տավուշի մարզերում մարզային զարգացման ծրագրերի ուղղություններով, որոնց կատարողականները կազմել են համապատասխանաբար 92.7, 85.0, 80.6 և 72.5 տոկոս: 2006 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ ճանապարհային տնտեսության ծախսերն աճել են 2.1 անգամ կամ շուրջ 3.9 մլրդ դրամով, ինչը պայմանավորված է պետական նշանակության ավտոճանապարհների հիմնանորոգման, Երևանի համաքաղաքային նշանակության ծախսերի աճով, ինչպես նաև «Լինսի» հիմնադրամի միջոցներով իրականացվող «Ճանապարհների հիմնանորոգում» և «Երևանի փողոցների վերանորոգում» ծրագրերի հիմնական աշխատանքները սկսելու հանգամանքով: Նշենք, որ «Լինսի» հիմնադրամի ծրագրերը 2007 թվականի պետական բյուջեում չէին ներառվել: Անցած ժամանակահատվածում դրանց շրջանակներում կատարվել են համապատասխանաբար 1.2 մլրդ դրամի և 374.4 մլն դրամի ծախսեր:

2007 թվականի առաջին եռամսյակի ընթացքում Հայաստանի հանրային ռադիոյի ծրագրի սփռումն ապահովող միջոցառումների իրականացման համար «Հեռահաղորդակցության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի սուբսիդավորման ծախսերը կազմել են շուրջ 94.0 մլն դրամ՝ ապահովելով նախատեսվածի 100% կատարողական:

2007 թվականի առաջին եռամսյակի ընթացքում տնտեսական այլ ծառայությունների ծրագրերի գծով ՀՀ պետական բյուջեի ծախսերը կազմել են շուրջ 606.1 մլն դրամ՝ ապահովելով եռամսյակային ծրագրի կատարումը 79.9%-ով: Խմբի բոլոր չորս ենթախմբերում առկա են ծրագրից շեղումներ: 2006 թվականի առաջին եռամսյակի համեմատ տնտեսական այլ ծառայությունների ծախսերն ավելացել են շուրջ 3.8 անգամ կամ 446.1 մլն դրամով, որը պայմանավորված է նութական ռեսուրսների պետական պահուստի ձևավորման և պահպանման ծախսերի ավելացմամբ:

Հաշվետու ժամանակահատվածում պետական բյուջեից ավելի քան 58.2 մլն դրամ հատկացվել է առևտրի, սպասարկումների, մատակարարման գործունեության և ընդհանուր

բնույթի տնտեսական ծառայությունների բնագավառում պետական կառավարմանը՝ ապահովելով եռամսյակային ծրագրի 77.2% կատարողական: Մասնավորապես, 19.1 մլն դրամ՝ նախատեսվածի 66.7%-ը, ուղղվել է «ՀՀ պետական գնումների գործակալություն» ՊՈԱԿ-ի սուբսիդավորմանը, 39.1 մլն դրամ՝ «Սպասարկում» ՊՈԱԿ-ի սուբսիդավորմանը, որը կատարվել է նախատեսված ամբողջ ծավալով:

Նյութական ռեսուրսների պետական պահուստի ձևավորման և պահպանման ծախսերը կազմել են ավելի քան 460.2 մլն դրամ՝ ապահովելով նախատեսվածի 96.8%-ը և 25.8 անգամ կամ 442.4 մլն դրամով գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը: Աճը պայմանավորված է 2006 թվականի առաջին եռամսյակում նյութական ռեսուրսների պետական պահուստի ձևավորման և պահպանման ծախսերի ցածր կատարողականով (0.8%):

Հաշվետու ժամանակահատվածում զբոսաշրջիկության ոլորտին պետական աջակցության նպատակով հատկացվել է 7.0 մլն դրամ կամ նախատեսվածի 14.0%-ը: Տրամադրված միջոցներն ուղղվել են ՀՀ զբոսաշրջիկության զարգացման պետական ծրագրի շրջանակներում ՀՀ 2007 թվականի զբոսաշրջության զարգացման ծրագրի ֆինանսավորմանը, որը կատարվել է 69.3%-ով: ՀՀ զբոսաշրջիկության զարգացման պետական ծրագրի շրջանակներում «Ծաղկածորը՝ միջազգային չափանիշներին համապատասխանող զբոսաշրջության կենտրոն» նպատակային խնդիրների լուծման ծրագիրը չի կատարվել, որի համար հաշվետու ժամանակահատվածում նախատեսվել էր 40.0 մլն դրամի հատկացում: Նախորդ տարվա առաջին եռամսյակի համեմատ զբոսաշրջության ծախսերն ավելացել են 70.3%-ով:

Ընդհանուր բնույթի տնտեսական այլ ծառայությունների գծով նախատեսված շուրջ 157.2 մլն դրամի դիմաց տրամադրվել է 80.6 մլն դրամ: Կառավարության կողմից հաստատված եռամսյակային ծրագիրը կատարվել է 51.3%-ով: Շեղումը հիմնականում առաջացել է 4 ծրագրերի շրջանակներում նախատեսված միջոցառումները չկատարելու արդյունքում, իսկ 3 այլ ծրագրերի գծով արձանագրվել է ցածր կատարողական: Այլ տնտեսական ծառայությունների ծախսերից շուրջ 62.9 մլն դրամն ուղղվել է «Հայաստանի հիդրոօդերևութաբանության և մոնիտորինգի պետական ծառայություն» ՊՈԱԿ-ի սուբսիդավորմանը, որի ծրագիրը 100%-ով կատարվել է: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ այս ենթախմբի ծախսերն ավելացել են 8.8%-ով կամ շուրջ 6.6 մլն դրամով:

2007 թվականի առաջին եռամսյակում պետական բյուջեի հիմնական խմբին չղասվող ծախսերը կազմել են շուրջ 9.4 մլրդ դրամ՝ ապահովելով եռամսյակային ծրագրի 69.1% կատարողական: Շեղումը հիմնականում պայմանավորված է ՀՀ կառավարության

պահուստային ֆոնդի տնտեսմամբ: Սակայն նախորդ տարվա առաջին եռամսյակի համեմատ պահուստային ֆոնդից կատարված հատկացումները զգալիորեն (մոտ 3.9 անգամ) ավելացել են, որով էլ հիմնականում պայմանավորված է խմբի ծախսերի 26.2% աճը:

Հաշվետու ժամանակահատվածում պետական պարտքային պարտավորությունների սպասարկմանը պետական բյուջեից հատկացվել է շուրջ 2.1 մլրդ դրամ՝ կազմելով ծրագրի 94.5%-ը: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նշված ծախսերը նվազել են 15.1%-ով:

Տեղական ինքնակառավարման մարմիններին տրանսֆերտային վճարումները գրեթե ամբողջությամբ ֆինանսավորվել են, որոնք կազմել են ավելի քան 4.5 մլրդ դրամ և 22.9%-ով գերազանցել նախորդ տարվա հատկացումները: Տրանսֆերտային վճարումների հատկացումներում մեծ կշիռ ունեն համահարթեցման նպատակով տեղական ինքնակառավարման մարմիններին տրամադրվող դոտացիաները, որոնք կազմել են շուրջ 4.5 մլրդ դրամ և 22.9%-ով գերազանցել նախորդ տարվա առաջին եռամսյակի հատկացումները:

Այս խմբի այլ ծրագրերի գծով ծախսերը կազմել են շուրջ 2.8 մլրդ դրամ, որից 1.9 մլրդ դրամը հատկացվել է ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից՝ կազմելով ծրագրի 31.1%-ը: Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի երրորդ ծրագրի շրջանակներում կատարված ծախսերը կազմել են 192.7 մլն դրամ՝ նախատեսված 11.8 մլն դրամի փոխարեն:

## ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՊԱԿԱՍՈՒՐԴԸ

2007 թվականի առաջին եռամսյակում ՀՀ պետական բյուջեի կատարվել է 13.7 մլրդ դրամ հավելուրդով՝ նախատեսված 23.5 մլրդ դրամ պակասուրդի փոխարեն: Ընդ որում, ֆինանսավորման ներքին աղբյուրները կազմել են -16.9 մլրդ դրամ, իսկ արտաքին աղբյուրները՝ 3.2 մլրդ դրամ: Հավելուրդը հիմնականում առաջացել է եկամուտների ծրագրի գերազանցման և ծախսերի ծրագրի ցածր կատարողականի արդյունքում, ինչի հետ կապված՝ չեն օգտագործվել առևտրային կազմակերպություններում պետական բաժնեմասի մասնավորեցումից (սեփականաշնորհումից) ստացված միջոցները՝ նախատեսված 10.1 մլրդ դրամի չափով, ինչպես նաև ծախսերի սեզոնային հարթեցման նպատակով նախատեսված բյուջետային ազատ միջոցները՝ 13.3 մլրդ դրամի չափով, որի փոխարեն գրանցվել է նշված միջոցների 14.3 մլրդ դրամով ավելացում:

2007 թվականի առաջին եռամսյակում պետական բյուջեն զանձապետական պարտատոմսերի հաշվին բացասաբար է ֆինանսավորվել շուրջ 2.1 մլրդ դրամով՝ նախատեսված 2.2 մլրդի դիմաց: Դեֆիցիտի ավել ֆինանսավորման պատճառը արժեկտրոնային պարտատոմսերի՝ հավելվածարով տեղաբաշխումներն են. թողարկված 7,000.0 մլն դրամ ծավալով արժեկտրոնային պարտատոմսերի տեղաբաշխումից մուտքը կազմել է 7,228.4 մլն դրամ: 2007 թվականի հունվար ամսին առաջին անգամ թողարկվեցին պետական խնայողական պարտատոմսեր, որից մուտքը պետական բյուջե կազմել է 150.6 մլն դրամ:

Դեֆիցիտի ֆինանսավորման ներքին աղբյուրներում շուրջ 433.3 մլն դրամ ուղղվել է մուրհակների մարմանը՝ ամբողջությամբ ապահովելով նախատեսված ծավալը: 2007 թվականին շարունակվել է պետական ներքին շահող փոխառության պարտատոմսերի հետզման գործընթացը. այդ նպատակով հատկացվել է 509.1 հազ. դրամ՝ նախատեսված 6 մլն դրամի դիմաց:

Հաշվետու ժամանակահատվածում պետական բյուջեի պակասուրդի արտաքին ֆինանսավորումը նախատեսված 2.8 մլրդ դրամի դիմաց կազմել է ավելի քան 3.2 մլրդ դրամ: Ֆինանսավորման բարձր ցուցանիշը պայմանավորված է արտաքին վարկավորման ծրագրի գերազանցմամբ 52.5%-ով: Առաջին եռամսյակում ստացվել են 7.2 մլրդ դրամի վարկային միջոցներ՝ նախատեսված 4.7 մլրդ դրամի դիմաց:

Արտաքին պարտավորությունների մարմանն ուղղվել է 2.1 մլրդ դրամ՝ կազմելով նախատեսվածի 97.9%-ը: Մասնավորապես 1.3 մլրդ դրամ հատկացվել է Համաշխարհային բանկի, 374 մլն դրամ՝ Վերակառուցման և զարգացման Եվրոպական բանկի աջակցությամբ

իրականացվող ծրագրերի գծով պարտավորությունների մարմանը, 411 մլն դրամ տրամադրվել է ԱՄՆ ապրանքային վարկի դիմաց:

Արտաքին աղբյուրներում ներառված՝ վարկային և դրամաշնորհային միջոցների մնացորդների փոփոխությունը կազմել է ավելի քան 1.8 մլրդ դրամ, այսինքն՝ նշված չափով ավելացել են վարկային և դրամաշնորհային ծրագրերի կատարման ընթացքում առաջացած ազատ միջոցները: